

Ա. ԵՓՐԵՄԻ  
ԽՈՒԹԵՆ ԱՍԱՐԿԱՅ  
ԿՅԱՀՐԴԱՔ



ՎԵՐԵՏԻ  
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԻՒԹԱՐԵԱՅ  
0829 - 1934

Φ Β Ψ

Σ 0.3 4 0.4 0.6 3

Ψ.

Եռուժ. թ.

Ակադեմիկ Գևորգան Կիւրիլ. Ակադեմիկ  
Հիմնարկութեան կողմէ

Հայկական ՍՍՌ Գիտութիւնների  
Ակադեմիայի Մատենադարանին

1966

Խ. Ե. Փ. Բ. Մ. Ե.

ԽՈՒԵՐԻ Խ Ա. Ա. Ո Ր Ի Ո Յ


ԿՅԱԿ Ո Ր Դ Ք



Գ. Ե. Վ. Տ. Ե. Կ.

Ե. Տ Պ Ո Ւ Յ Ե Ա Ա Վ Ո Ւ Յ Ե Ա Յ Ե Ա Յ Ե

մաշ - 1934



# Ա. Զ. Դ

Յ Ա Ռ Ա Զ Ի Ն Ս Տ Ա Գ Ի Բ



ՅՈՒՇԻԿ

ԽՆ Կ Ա Բ Ո Յ Ր

Հ. ԼԵՒՈՆԻ ԱԹՃԵԱՆ

Կ. ՊՈԼՍԵՑԻՈՅ

ՆԱՎԻԱՅԱՐ ԵՐԿՐՈՅ

ԸՆԺԱՅԵԼՈՅՆ

Հաղորդասիրացն մատուցանեմք  
զայս ի ձօն հոգենուէր, յանգ դովիճ  
հանել զամս շնորհարեր: Ի՞ւ իսկ  
յառաջունիշ գոյր ապարեն պասիկ  
զդա իւիք, երկ ոչ Հոգեկիր քնարին  
բաղցրալար դաշնակուրեանցն հե-  
զահօսիկ բարբառով: Ուր ընդ ձմեկ  
սրտին ի զիզ խորազգած՝ պասցի  
և հոգին ի թես նոռազաց՝ յաս-  
տուածարնակ խորանս արփանեմ:

Յառաւեկ խելամտուրիւն բազմա-  
պատիկ զեղեցկուրեանց սովիերիս,  
ի ընին արկցուք զայլեւայլ հանգա-  
մանս սորուն: Եւ նախ անունդ

Կցուրդ՝ նշանակել րուի ձառ ինչ  
մեկնողական, կամ բան հակիրճ՝  
կցեալ յընքեցուածս աշուրն պատ-  
շամի, որուի և զյորչորչունն ըն-  
կալան. որով և ասին իսկ ի յիշա-  
տակարանին՝ «ԿՅՈՒՐԴՔ ԱՍԱՅՈՒԱՐ  
ԵՓԲԵՄԻ»։ Զամանէ գրեալ է ի Բազ-  
մալիսի 1929 ամին, յէս 136։

**Զապաշխարուրենին և զարոյ**  
**Հաղորդուրենին են ձաւրս։ Թուի**  
խօսեցեալ զոյ զսոսա յաշուրս բա-  
ռասնորդական Փահոց, որոց և րիշն  
իսկ զայցն հաշատուք, զի յիսուն և  
մի են րուով։ Յառաջինս անդ զժա-  
մանակեան եւեր խօսի զկերակրոցն,  
որպէս Եսյին և կենդանեացն ի տա-  
պանին, Արրանամու ասպեջակա-  
նուրեամբն հրեշտակաց, Եշիացի և  
ազաւուցն, Եղիսկի և ինչն Առ-  
մնացոյ եւն։ Ասու յառաջ եւս

Ակրտեալ՝ ձառ և զմանանայէն ա-  
նապատին, և այսպէս ուն ուն  
ի վեր անդր ամրանեայ զմիսս զառ  
ի սրովիէիցն յանձնաս սեղան։

**Ացրդացս բնագիր տարի չէ ի**  
միջի, որպէս յոյն և լատինն չերեւի  
ու Անկմանեայ։ Անծանօր ուրենին  
են օտարաց։ Ասկայն զհարազա-  
տուրենին սոցունց չիք ինչ երկրայել,  
որպէս յայտ յանդիման տեսանի  
վիրժանողացն ի յստակ վարդա-  
պետուրենին և ի բովանդակ շա-  
րամանուրենին։ Քաջայարմար ձեւ  
բանաստեղծական, սղարան՝ և բան  
զբնաց կենդանի նկարագրոցն որ  
ի սմա, զուել իմն րուին Եփրե-  
մայն զոյ։

**Ի հայունս եւեր ունիմք զպա-**  
տուրական զայս մարդարիտ, և այդ  
ի միուն միայնում բղբեայ ձեռա-

գրի՝ ի բառածալ ձաւընտրի ուրեք  
**Լշմիածնի**, ընդ 902 բորովին պահե-  
 րոյ: Ի սևանէ տեսան Պաշղոսի ու-  
 սուննասկր և բարեացապարտ վար-  
 դապետի Փետրուսեան Կոստանդ-  
 նուպղուցոյ՝ բարեկամի Ուխտիս,  
 մեծաւ նեղուրեհամբ և հաւատարիմ  
 ձզդրտուրեկամբ ի 1849 ամին օրի-  
 նակեալ՝ թեր եղրոր իշրում Քերով-  
 րիի ի նուշը: Ի Կ. Պողլիս՝ մերոցն  
 զնոյն օրինակն յղեալ ի վաևս, չա-  
 նիւք Նորբնայից ի Պ. դասուն՝ ընդ  
 այլ ձառս, յաւին 1851 մինի զաղա-  
 փարեալ. և այժմ ի կարդի զրր-  
 չագրացն՝ ընդ Գ., զ, 769 բորովին  
 պարունակի, յորմէ առաջիկայս զա-  
 մես առեալ և որ ի լոյս: Ի մեր-  
 օրինակ, թթ. 257:

**Ի սպառ կորուստ մասսանց ինչ**

ի սոցանէ՝ ոչ տացէ մեզ ըստ ար-  
 ժան բառականի աւաղել զդոսա. զի  
 բանատեղծին միանգամայն և հո-  
 գեսիրին, ընդ աստուածարանին՝  
 ցաշ և զդոցանի և հայկարանին:  
**Զի բնաւից իսկ սոցունց զոյ ձարակ**  
 գտանել ի դոսին: Բազումն ի իշբ-  
 դիր լեալ՝ հազիշ հատուածն երիս  
 գտիյաւելով ի հրատարակուրիւն: **Մատունս** երկուս ի ԵԺ և ի ԶԺ  
 կցրդացն և զիս կցուրդն ողջոյն,  
 որով ուղղեալ բովանդակեցաց քե-  
 րին օրինակիս: Գտանին նշխարքն  
 յանուն նեղինակին՝ այլ այլով վեր-  
 նագրաց, ի մերումն Գ. ձաւընտրին  
 զրելոյ ի Ո.Զ.Զ (1637) յԵրուսաղէմ,  
 և ի կարդի մատենադարանին՝ ոչնի  
**Լ.**, զ, 512. յԷսն 478-481 և յ'805:  
**Զպակասդ ու յանեկմանն միայն թեր-**  
 րիցն պատահեալ կարծեմ, այլ և

ի շփորեալ կազմեն: Եշ այդ յայտնի ցուցանի ի Իթ կցրդեն խառնելոյ ընդ երեսներորդին: Զիսս աւարտի բանիքս առ... և չորիշը իջիշը յառաջ՝ դնի զուխս նոր անվերնեազիր ... իւծուցն: Յայտ ուրեմն և սորա բովանդակուրին շինել նախորդին, որպէս ի կարգ ի խաստիցն իսկ բաց երեւի: Տրոնեալ յերկուա և յար մարտակն ուղղեալ դասեցար՝ տես յէլ 69:

Լեզու ձառիցն և դարձուածք բաշեց՝ բաշընուիր ևն յոյժ, և օտարացեալ զանցանին անհենելիմք զվկայասիրին և զլիշլիկեան դարուցն զնոնի: Այցա կարգ և ձեւ յամենայնին հնուրեան և զուշակ: Եշ զի չունի ինտիր յայլոց մատենացուրեանց Եփրեմի, ասելի կարծեմ Ա. Հարցն մերոց թարգման-

չոցն զոյ վաստակ: Կարծիս ինն տայ և յԵղիշեայ ընթերցեալ լինել դա, զի Հայկա, բու, զբաւդ «ծակոտուած» յԵղիշեն միայն զիտէ, և սա՞ ունի զայն զնեւ օրինակի որ ի ԾԱ. կցրդին, յէս տպ. 138:

Զի անձանօր եր ձեռագիրս նեղինակաց Հայկազեան բառազրոցս, վասն որոյ բազում բառը ևն ի անս յաւելլիք յայն:

Զըերական և զուղղագրական ինչ խոտորմունս, զբազում բառից զանս սովոր առմունս և զրիւ, և զայլ ես տեղեկուրին մատենագրական, զացնի բանասէրը ի Բագմալիսի տարւոյս յամսեան Ապրիլի փոքր ի շատէ եղեալ:

Գոզցես խորմրդեամբ ինն լեալ կորուստ մաստեց ինչ պրակիս, որպէս զի զառաջակայիցն միան-

զամ առեալ զձաշակ, բայի ընդ եր-  
կինս անցցեն միտք բրիստուսահրք,  
և զաւ ի մագաղաքեայցն զրլա-  
ցեալ՝ փրկուրիւնաքնը որումնամբք  
ի սիրտ և ի հոգի, մեք մեզեն առա-  
ւելօքն բովանդակել մարրացուք:

Դնեմ զայդ իրրու ծաղիկ բրրք-  
մենի ի շիրիմ Հօր սիրեցելոյ Լե-  
ռնենի Արձեան, որ զառաջինն ինձ  
բաղցրացոյց զիմ դպրուրիւն Հայ-  
րինի:

Հ. Գ. Ա.

## ՅԻՇ Ա.Տ ԱԿ Ա.Ր Ա.Ն Ք

### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁԻՆ

«Կատարեցաւ Կյու-րու+ Ա-ս-ց-ո-ւ-ն-ց-  
Ե-ր-է-ն-է երանելոյ, ձեռամբ անարհնոտ  
գրողի Գրիգորի սպասաւորի Ակներոյ վա-  
նիցա, ի թվ. ԶԿ. ի սոյն ամի սկիզբն  
արարաք Տիմուրն բերդին որ ի Քարոզիո-  
կնոցն »:

\* \* \*

«Բժշկեամ Տէր զվէրս անսպատացեալ  
ի բարեաց հոգոյ զրողկանս»: — Յիշա-  
տակարանս ի բնազրին, է ի վախճան  
Լ. Կցրդին:

Օրինակս աստ ի վախճան ԽԲ. Կցրդին՝  
յաւելու զյիշատակարանս բնազրին. «Ան-  
կիրթ վերակացուիս սրբոյ անսպատիս,  
ողորմեամ Տէր իմ Յիշոււ»:

«Անմ բնակութեան արժանի արացէ  
Քրիստոս Աստուած զստացօթ զբոցս գԴրի-

զոր զառաշնորդ անապատիս և զաշիսաւ տեալքն ի սմա, և որ լի որտիս զամէնն առն »:

« Բժշկեա Տէր աստուածային սպեղաւ նեօք քո զիսխայթեալ վերս հագոյց զրող կան սուրբ մատենիս Գրիգորի սպասաւորի սուրբ անապատիս Ակներոյ »:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴԻ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ  
ԳՐՈՅՑ, (Նօտրգիր)

« Ի թուին ՈԽԵ, նորողեցաւ վերստին սուրբ զիքքս ի զիւզաքաղաքն ի Թովուրան, ի գուռն սուրբ կարապետին, ի հայրապետութեան տէր Պիկորոս քաջ բառնապետին մերոյ, և յասաշնորդութեան տէր կարապետին և աստուածարան վարդապետին, ձեռամբ անարժան թումայի աշակերտի: Աղաւնմ չլինել մեղադիր մեղ վասն պակասութեան զրոցս՝ և խարնիխուրն լինելոյ: Քանզի յոյժ աշխատ եղաք և ոչ խորցած չունել չպահան սորտ, և ոչ ուղինավ ոչ հոյը: Բայց զայն որ յայտնի զոյ ի զիքս ուսցիս, և զմել անպարսաւ թողինս »:

Ս. Ե. Փ. Ե. Մ. Ի.

## Կ Յ Ո Ւ Ր Պ Գ Բ

ՎԱՍՆ ՔՆՈՅՑ  
ԵՒ ԱՐԹՆՈՒԹԵԱՆ\*

Մի տայք իշխանութեւն քնոյ թաւ գաւորել յանդամս ձեր: Լուարուք զաղէտն զոր գործեաց յերկրի. քաս քնեցէք և փախերուք ի նմանէ: Զի կողոպահեցաւ ի քաւն Ադամ՝ կողին որ առաւ ի նմանէ: Յարթնութեանն մի էր, իբրեւ ննջեաց՝ բաժանեցաւ և եղեւ յերկուս: Նոյ՝ ծանր այպանեցաւ քնովիս որ ծնաւ ի նմանէ: Յարթնութեանն՝ զգաստ էր և պար-

\* Աս և յաջորդն՝ ի գ. Ճառընտրէն առեալ. տ. յԱզգին, յէջ 9:

կեշտ, և ի քունն մերկացաւ և առակեցաւ: Ղովլո, գարձեալ՝ ի ձեռն քնոյ իւրոյ կողոպտեցաւ և ոչ զգաց: Մեծացան արթունքն ի գանձէ նորա, և եղեն յազգս բազումս: Զի եթէ ընդ արդարս զայն գործեաց քուն, և ոչ զգաց ի գողանալ զնոսա, քանի՞ եւս երկիցուք մեք մեղաւորքս ի քնոյ՝ զի մի տիրիցէ մ.լ:

Ի քուն մեռան անդրանիկքն Եղիսակասի և ոչ զգաց թշուառականն այն: Բայց իւրեւ զարթեաւ և յարեաւ՝ ապա զգաց հարուածին իւրում: Ախարա, որ սկայութեամբ իւրով ջարդեաց զազդն Երբոյեցւոց, որչափ մեծացաւ յարթնութեան իւրոյ՝ նոյնչափ տկարացաւ ի ձեռն քնոյ: Զի Յայել յարեաւ ի վերայ նորա, և վարեաց ցեց ընդ ծամելիս: Քուն նախատինս արար զնա. զի ի ձեռն կնոջ սպան զնա: Սամիստն ուխտարոն, որ յորովայնէ զգեցեալ եր զհսկայութիւն, ի ձեռն կնոջ, որ այրեաց զՓղիշտ, կուրա-

Հյուլիկ  
918

ցուցին Փղտացիք զաչս նորա: Նա սպան զառիւծն, և աղուեսօքն այրեաց զՓղիշտ: Քունն նենդեաց և եգերծ զնա, և ի առւէ ընդ երկանս կապեաց զնա:

Գիշերի Մագիստրամ աւարեցաւ: Արթունքն որ էին ընդ Գեգէոնի՞ ի ձայն փողոյն ընդոստեաւ և զարթեաւ, յարեաւ և ընդ սուրբ հՀան զանձն իւր: Ոչ շաղախեցան ձեռք արթնոցն յարիւն ծանրարթուն քընէածիցն: Զահիւք և բարբառովք արթնոցն՝ պղծեցաւ յարիւն անձին իւրոյ: Գեգէոն հակուն էր յաղօթս, և զՄագիստր երազքն սահէին: Մարգարեացան նմա յաղթութիւնք, և պատահեաց նոցա պարտութիւնք:

Կողոպտեցաւ ի քուն Սաւուզ, զի կորոյս զտառւն լոթկի իւրոյ: Զի ի ձեռն տանոյ զոր հՀատ՝ առ զթաշգաւորութիւնն առ ի նմանէ, և ոչ քայքնեաց նա յայսմանէ: Եւ յաւել միւսանգամ ննջեաց՝ մերկ մնաց ի զինուէ իւրմէ: Զի առաւ ի նմանէ

գԵղարդն՝ տէքն իւր, և զկեաննն որ  
յետ քնոյ չնորհաւ ետ նմա Դաւիթ։  
զի յայն քնոյ որ յայրի անդ՝ քուն  
յաւիտենից ննջեաց նա:

Եւ զի հայհոյեաց Ռափսակ և նըն-  
ջեաց՝ կոտորեաց հրեշտակն զզօրս  
նորս։ Եւ սերմն զոր սերմանեաց ի  
տուե՝ չնձեաց ի գիշերի։ Զի Ռափ-  
սակ ննջեր ի դահոյս իւր, և Եղեկիել  
արթուն էր յազօթս։ Էջ զուար-  
թուն յաղօթս արթոյն, և սատա-  
կեաց զբանակս ննջեցելոցն։ Աիսն  
լի էր ազօթիւք, և բանակն Ասու-  
րեստանի՝ մեռելովքն։ Հսկողքն՝ որ  
ի քնէածիցն հայհոյէին, ննջեցուցին  
քուն յաւիտենից։

Գիշերաւ աւերեցաւ Բաբելի Ամա-  
րաց՝ որ հսկայունքն էին. քանզի ի  
մատնել ետ զհոյակասն ընդ ամե-  
նայն երկիր։ Զի այն որ ննջեն՝ հան-  
գերձ արթունին՝ մի են, և չեն մի  
նոքա։ Հանդիսա քնոյ ոչ միայ, և  
պահեալ է հատուցումն աղօթից։  
Այս վաստակ որ յանդամն մեր,

յաճախիւ մեղ շահ ի բարձունու-  
Անցանէ վաստակս այս մեր, և կայ  
միայ վարձուն յաւիտեան։

### ՎԱՍՆ ՀՍԿՈՂԱՑ

Ժուժեցայք փոքր մի, առաքինիք,  
բառնալ զծանըութիւն խաւարի, զի  
աչա փոքր մի՛ և կատարեաց զժամս  
իւր, և այց առաւոտ՝ ուրախ առնէ  
զմեկ։ Գիշերի հսկեցին աշակերտքն,  
և զի ներհեցին ի արամութենէն,  
եպերելով եպերեաց վարդապետն  
զնոսա։ Հաստատիչ բնութեանցն՝ ոչ  
ըննադատէր զակարս՝ եթէ ովկ է  
մարդկութիւնս որ յաղթէ քնոյն։  
Եւ ոչ պատուիրանազրէր դարձեալ,  
թէ ոչ՝ զի յաղթեալ լինէր։ Եղե-  
րուք, ասէ, հսկեցողք, պահել զժամ  
փեսային որ գալոցն է։

Զորս պահս ետ մեղ պահել զա-  
մենայն գիշերս կենաց մերոց, զի յու-  
րում ի նոցանէն եկեսցէ փեսայն՝  
դացէ արթուն զԵկեղեցի իւր։ Թէ-

պէտ ծածկեաց զժամն և զօրն իւր, և ոչ յայտնեաց զժամ ծագմանն իւր: Ա.Հ. զի ի դիշերի առնի յայտնութիւնն իւր՝ աչա գուշակեաց ընդ չորս կողմանն: Պահեսցուք այսուհետեւ զժամ փեսային՝ որպէս ուսաք մեք պատուիրան: Զի թէ յաւուրս մեր ոչ եկեսցէ ոչ զլանայ զմեզ ստուգութիւն նորա:

Որպէս գարնչիք՝ վարեսչիք, ասաց Վարդապետն ցաշակերտոն իւր: Հաւլածեսցուք զ.քուն յաշաց մերոց՝ պատրաստ լինել գալստեան նորա: Յանկարծուստ փայլատակէ փայլակն, ճայթէ ճայթիւն՝ և ընդուտուցանէ: Յանկարծուստ խաղայ անդրանիկն, և շարժէ զջօրութիւնս երկնից: Սաստկութիւնս ամենայն փայլատականց և արհաւիրք ամենայն որոտմանց, իբրեւ զհագագ և զուշինչ են յաչս յայտնութեանն Քրիստոսի: Խաւարի արեգակն յերեսաց նորա, և լուսին խափանի, և չնջի խաւար և պակասի ի ձեռն

ծագման մեծի նշանին, և սփռի քուն և նիրհ յաչաց: Եւ խափանի ցանկութիւն անդամոց՝ և միաբանութիւն տարածի, որոց ոչ առնի պակասումն: Ամենայն որ պահէ ըզժամ փեսային՝ ուրախ առնէ զնաի յայտնութեան իւրում. զի իրաւունք են հանդուցանել զանդամն որ բարձին զծանրութիւն ի կեանս իւրեանց:

Սկեսցուք ըստ կարի մերում, ապա թէ ոչ քան զկար մեր: Ճիրք որ վաստակին ի միջի մերում՝ նոքօք կշտամբի վատութիւնն մեր, զի ոչ սկեցաք յերեկօրեայ: Մի լցուք երեք ծանրարթունք. զի է որ սկէ զդիշերն ողջոյն՝ մեք սկեսցուք գոնէ զկէմն: Զինչ օգուտ է զի ննջեցաքն երեկ. յաւելցուք ննջեսցուք այսօր: Յաճախեն սկեցողքն յաղօթս, և քնէածքն համարին երազովք: Գափ շունչ հսկեցողաց, և պարկեշտ լինի միտք նոցա: Եւ ի շունչ քնէածաց՝ ժողովեալ է խարեւութիւն մոլորու-

թեան տեսլեանց։ Փառաւորի շունչ  
հսկեցողաց զբաղմամբ իւրով որ ընդ  
Աստուծոյ, և շունչ քնէածաց՝ լինի  
խաղ չարի։ Յերազս իւրեանց աղ-  
տեղին ի ձեռն տեսլեանց իւրեանց,  
և տիրեն կարիք ի վերայ նոցա։ Եւ  
քուն՝ որ կարծեցին թէ հանգիստ  
է, եղեւ ամենեւին աշխատութիւն։

Թափառին ընդ բազում տեղիս,  
և ցնծան և վշտանան յանօգուտաս;  
Ծնդ ամենայն կողմանս բլացան և  
դարձան, իւրեւ ոչ փոխեցան ի մար-  
մոց իւրեանց, զի ոչ եղեն հսկման  
Աստուծոյ։ Տիրեաց սասանայ ի տե-  
սիլս նոցա՝ զի ոչ ժողովեցան ի  
դուռն Տեսոն իւրեանց։ Հսկեցողաց  
յաճախեցին շահք իւրեանց, և քը-  
նէածից՝ յաճախեցին երազս իւ-  
րեանց։ Պահեալ է վաստակ հսկե-  
ցողաց, և դառնայ յոչինչ ժողով  
երազոց։

Եղիցի ինձ յիշասակ ի միջի ձե-  
րում, հսկեցողք, որ բարձէք զծան-  
րութիւն։ Ահա զբաղումն յորդորեմ  
զի եղիցին արթուրք։

### ԿՅՈՒՐԴ Ժ Ձ Զ.

... իբրու յերկարէ թէ ժամա-  
նակաց նորա։ Հսկումն որ ծանր է  
ամենայն ումեք, յոյժ թէթեւ առ  
նոսա։ Փեսաւէրք էք գուք որք հրա-  
ւիրեցայք ի հարսանիս փեսային որ  
ոչ վախճանի։ Հալածեսցուք զքուն  
ի բբաց մերոց՝ օրհնութեամբք ըլր-  
թանց մերոց։ Զի եթէ անդ ուրախ  
լինին ուրախութիւն՝ որ գայ զեղջ  
ոգւոց, որչափ եւս ուրախ լինիցին  
աստ ուրախութեամբ՝ որ հարիւրա-  
պատիկ ժողովէ զսերմն իւր։ Եւ զի  
անդ բարբառք փողոց՝ աստ քնարք  
սաղմոսաց։ Անդ բորբոքեալ նզո-  
վեալք չարին, և աստ օրհնութիւնք  
Աստուծոյ։ Անդ երկրորդեն զկարիս  
ատելիս՝ զոր գործէ ցանկութիւն  
ի մարդկութիւնս, աստ երկրորդեն

\* Աստի սկիզբն առնու օրինակս մեր,  
անվերնագիր։

զկարիս օրհնեալո՞ զոր կրեաց Տէր  
և ծառայք իւր: Զի եթէ ի ձեռն  
փողոց և քնարի բառնան զքուն յա-  
չաց մարդկան, և այն որ յամենայնէ  
ապստամբէ՝ զօղաջիւն ծնծզյիցն  
ցրէ զնա: Աստ զի հնչէ հոգի սրբու-  
թեան ի բերան Դաւթի քնարի իւ-  
րոց, քանի՞ եւս թագաւորեացէ ի մեզ  
արթնութիւն, զի զօրութեամբ բա-  
նից նորա խմաստնասցուք: Գուն՝  
հալածեալ ի խաղուցն՝ պարտի, և  
վկութիւն յաղթեաց նմա, քանի՞  
եւս յաղթեացէ պարկեշտութիւն:  
Փեսայ ներքին՝ ուրախ լինի ի հըս-  
կման հակառակ սպոյ, փեսայն վե-  
րին՝ ուրախ լինի ընդյատակ հսկումն  
սրբոց սպացելոց: Որ պարտի ի ծան-  
րութենէ այսր քնոյ անդամոց՝ ժա-  
մանակեան փեսաւերաւ կշատրի,  
զի հալածեալ է քուն յաչաց նորա:  
Անդ արթնութիւն առանց վարձու,  
և հսկումն առանց խոստաման. հըս-  
կման մերում՝ հանդերձեալ է փառք,  
և դրախտ փափկութեան խոստա-

ցեալ է: Թէ յայնմ հսկման ցըն-  
ծութիւն է, աչա պարկեշտութիւն  
յայսմ հսկման: Եւ զի լի ամենայն  
վնասու է այն, այլ և հոծեալ է սա-  
հեւք: Այն հսկումն անցանէ, եղ-  
բարք, և պահեալ են ամենայն ներ-  
կուտօք իւր, և այս հսկումն խափանի՝  
և մայ գանձ կենաց իւրոց: Մեղք  
ծածուկք որ ժողովկեցան ի հսկման  
ժամանակեան փեսայից՝ առարկէ ըզ-  
նոսա, ի մեծի ծագման Որդույն Աս-  
տուծոյ փեսային յաւիտենից: Զի  
անդ ամենայն ոք պատրաստի գայ-  
թակլեցուցանել զայն որ լսէն նմա.  
աստ՝ պատրաստեալ է ամենայն ոք  
օգնել այնմ որ լսէն նմա: Անդ ամե-  
նայն ոք զերեսս իւր ցուցանէ ըն-  
կերի իւրում ի վնասել, աստ՝ աչա  
ի ձեռն փողոյ զգուշացեալ են եղ-  
բարք միմնանց: Նորա կոչեն զցան-  
կութիւն յինքեանս, լրովն որ մտանէ  
յականջս նոցա. աստ լսէն զբար-  
բառ Հոգւոյն՝ որ սրբէն զմիս նոցա:  
Անդ ամենայն ոք պնդանայ մեղան-

ՆԵԼԵԿԱԳ ԽԵՐՈՈԳ + և ամենայն ինչ որ  
լինի յուսով՝ վաստակով կատարէ  
զայն մարդ: Զիստիալէ չարն և Ճեպէ  
ի հակումն որ մեղանչէ հսկողաց, նոյն  
պէս անդաստէ զայնոսիկ որ հսկեն  
վասն օգտի:

### ԿՑՈՒՐԴԻ ԺԷ.

ՕՐՀԱՆԵԱԼ, Է ՈՐ Ի ՀԻՇԳ ԿԱՊԱՅԱԿԻՆ  
ՅԱԴԵՑՈՅՑ ՀԱԶԱՐԾ ԲԱԶՈՒՄԸ

ՀԵԼ ՀԵՆԿԵՐԻ ԽԵՐՈՈԸ, աստ ամենայն  
ոք ժբանայ շահէլ զանձն և զընկեր  
խւր: Անդ ի խաղ և ի ծաղը Երթան.  
աստ ի լալ և ի սուրդ գան: Զպար-  
տիսն զոր ժողովեցին անդ՝ այսու  
հսկմամբ քաւեն: Աթէ հսկումն որ  
այսպիսի լինառուք լի է սիրելի է և  
թեթեւ, հսկումն մեր բազմաշահ  
քանի եւս գգուեցի ի զուտրթնոց:

Արցուք մեզ օրինակ բարի յայնմ  
լկոի հսկմանէ, արթնութեամբ մի-  
մանց նմանեցուք, և ատարասցուք  
ի խորհրդոց նոցա: Եւ զի նման են  
խորհուրդք նոցա բարբառոցն որ  
անկանին յականչն նոցա, նմանեց-  
ցին խորհուրդք մեր բարբառոց հոգ-  
ւոյն զոր լուաք: Խափանեցաւ խաղն՝  
և կայ լինա իւր. անց հսկումն՝ և  
կոյ անօրէնութիւն իւր: Մեռան ա-  
սողք և լսողք, և պահեալ է դա-  
տաստանն ահեղ ատենին: Աթ եմք  
աստ և անդ, և չեմք հաւասար. բայց  
աստ տաղական և վհասող մոտք: Զի  
ինչ որ անօգուտ է՝ թեթեւ է առ-

Որ քննես զծնունդ Որդւոյ, պատ-  
մեա զպարդեւէ նորա, թէ զիարդ  
ի հինգ նկանակէ յագեցան հաղարք  
բազումք: Որ հնեալ որ ի հինգ նկա-  
նակէ յագեցոյց հաղարս բազումս:  
Ի հինգ նկանակէն յագեցան, եթէ  
նկանակքն նկանակս ծնան: Եւ  
զիարդ ծնան նկանակքն այն՝ առանց  
յղութեան և ամուռնութեան: Որ-  
հնութիւն ձեռացն՝ որ ի նոսս յղա-  
ցան նկանակքն զմիմեանս: Հինգ նը-  
կանակքն այն ծնան բիւրս և հաղարս

դեանն կրեալ էր հացի ձեռաց նորա, պարտէին ի բազմութենէն զոր կոտորէր արարչութիւնն նորա; Եւ իբրև մատեաւ Շմառոն, կարծեաց թէ իւր եւեթ բաւական գուցէ; Անդ լի բազկովք իւրովք առնոյր՝ և ի ձեռաց նորա ոչ պակասէր; Առաջի բազմականացն բազմանայր, և ի վերայ ձեռաց նորա աճէին, և ի բազկէ Որդւոյ օծելոյ ո՞ւ որ ասասցէ՝ թէ քանի աճէր:

Ասասցէ քննողն, զիա՞րդ ծնան նկանակ.քն զմիմեանս: Ո՞ւ ետ ամումն նկանակացն՝ որ ամուլն էին բնութեամբ իւրեանց: Եւ զի նկանակ.քն զմիմեանս ծնան առանց ամուսնանալոյ և սրբապէս, ո՞ւ բաժաննեսցի ի ծննդէնէ սուրբ անդրանկանն Մարիամու: Առ Տէրն մեր զիինդ նկանին, և անդրէն իբրեւ հայեցաւ յերկինս՝ եռացինն նկանակ.քն ի ձեռս նորա. և զարմանք կալան զաշակերտան նորա: Զի հինգ էին՝ ամենայն ոք գիտէր, և եթէ զիարդ բազմացան՝ զայնոչ ոք գիտէր: Առաքեալ.քն կրէին ի ձեռաց նորա. ոչ եթէ երկոտասանքն միայն կրէին զհացն ի ձեռաց նորա, այլ և եւթանասուն և երկու.քն կրէին հաց հազարաց մարդկան: Զի եթէ և ամենայն ժողովը

Հաղարք հիւանդաց և ախտաժէտք էին յամենայն կողմանց: Յետ բժշկւ կելոյ զախատ նոցա՝ յագեցոյց զքաղցութիւնս նոցա: Առաքինութիւն առանց թուոյ, ի հիւանդս առանց համարոյ՝ արար նա ի ժողովուրդն յայն: Եւ յետ քննելոյ աւուրս երիս՝ ապա արար սքանչելիս, որում վլկայեաց ժողովուրդն ամենայն: Յամենայն ումեքէ փառաւորեցաւ, զի ամենայն ոք լցեալ յագեցաւ: Անոյշ էր հաց անապատին՝ իբրեւ զմանանայն յանապատին: Անանայն՝ այ-

դուց ասպականէր, և նա որչափ ընդէրկարէր՝ անոյշանայր: Սակաւ էր հացն որ նշխարեցին, զի երկոտասան սակառի նշխարեցին: Յոյժ էր հացն զոր կերան, և առաւել եւս զոր նըսպարակն բարձին: Ոչ ունէին որովայնք նոցա՝ որչափ ունէին շալակք նոցա: Յորովայնն չափով բարձին, և առանց չափոյ ի շալակս իւրեանց: Յագեցան, նպարակեցին և նշխարեցին: Եւ զի ոչ ոք էր որ առնոյր՝ ժողովեաց յանապատին, զի մի կորեցէ նշխար օրհնեալ հացին:

Հ Օրհնեացէ Տէր զյարկս ձէր յաղօթից երկրպագուաց իւրոց: Զի զսուրբն ուրախ արարէք՝ ուրախ լիջէք ընդ հրեշտակս նորա:

### ԿՅՈՒՐԴ ԺԸ.

ՕՐՀՆԵԱԼ ՏԷՐ ԵՒ ԱՆԴՐԱՆԻԿԱՆ,  
ՈՐ ԿԵՐԱԿՐԻ ԶՈՄԵՆԱՅՆ ԱԿՌԱՐԿԵԼՈՎ,  
ԿԱՄԱՅ ԻՒՐՈՅ

ՕՐՀՆԵԱԼ ՏԷՐ հոգաբարձու քաղցելոց որ ընդ չորս կողմանս, զի ուստի ոչ ակն ունի անտի պատրաստի նմա կերակուր: Ոյլ միաք կարծեցին եղբեք եթէ ագռաւք կերակրեն զմարդ: և այսր որ ամենայնի գժուարին է գիւրաւ գործեաց առ Եղիա: Իբրեւ ասաց ցնա Տէր իւր՝ թէ թագիր ի ձորն Քերիամու, խորհեցաւ արգեօք՝ թէ ու բերիցէ կերակուր յանապատն աշագին: Թէ երեւս կարծէր եթէ մանանաց բերիցէ նմա իբրեւ ժողովը գեանն: կամ իբրեւ զՄովսէս մնայնա առանց կերակրոյ ի գլուխ լեռինն: Մինչ գեռ խորհեր վասն այսորիկ, կամ մինչչեւ խորհեալ էր,

առէլ ցնա, թէ ագռաւուց հրամա-  
յեցի կերակրէլ զքեղ: իբրեւ ասաւ-  
ցաւ այս Եղիսյի, լուսան ագռաւուք  
զպատգամս նորա: ի ծննդենէ և ի  
սիրելոյ օտարացան՝ զի կերակրեցեն  
զմարդարէն: Ագռաւուք փախչողք ի  
մարդկանէ՝ համբուրեցան ընդ Ե-  
ղիսյի, զի ոչ միայն հաց բերցեն նմա՝  
այլ զի լիցին նմա բանից ընկեր: Եւ  
զի անարդեաց զշէն մարդարէն՝ և ել  
նա ի ձորն աշագին, ագռաւուք օտա-  
րացան յանապատն, զի ցանկացան  
շնութեան մարդարէին: Անդ արա-  
րին բնակութիւն և արօտս. անդէն  
տածէին և ոչ փախչէին յերեսոց  
նորա, զի ելիցին նմա ի զբօսանս:  
ի ժամու ճաշոյ ուանելոյ՝ երթային  
նոքա ստիպաւ, զի մին բերիցէ հաց  
ի բերան, և միւսն միս ի ըրթունս  
իւր: ի հասարակ աւուր՝ առ երե-  
կոյի, զի հանդչի ամենայն թէւ ի  
վաստակոյ, նոքա աշխատէին հան-  
դերձէլ ճաշ և ընթիւս մարդարէին:  
Եթէ վաստակէին և եթէ ոչ: ի ժա-

մու զի ժողովի թէւ, ի հասարակ  
աւուր՝ բերէին ճաշ, և երեկոյի զըն-  
թրիս նորա: Թէրէւս ոչ ինչ ճաշա-  
կէին, զի ուսան պահս նորոգապէս:  
Զի ի կերակրոյ նորա կարձեալ էին  
յամենայն կերակրոց գտան օտարա-  
ցեալ: Մին ունէր հաց ի բերան, և  
միւսն միս յատամունս իւր. և ոչ  
զինչ կամ էր նոցին՝ գիտէին: իբրեւ  
գնէին առ սեղան նորա զհացն և  
զմիսն, կային առ նմա մինչեւ ուտէր  
նո՞՝ զի կերիցեն ի նշխարաց նորա:  
ի հացէ նորա ուտէին որչափ եղեւ  
ի ձորն Քորիաթու: Եւ նա՞ որ կե-  
րակրեաց ի Հարթաք զայրին, և զա-  
գուաւսն՝ ի ձորն Քորիաթու: Հո-  
գաբարձուք մարդարէին՝ կարօտէին  
մարդարէին, զի ի նորա պատճառս  
կերակրեցան: Քաղցեալքն այն կե-  
րակրեցին զնա, և քաղցեալն դարձաւ  
զքաղցեալսն կերակրեաց: Երկեաւ  
և փախեաւ ի մահուանէ, և կեցոյց  
զորդի այլուցն:

Փ Օրհնեալ անդրանիկն որ զթըռ-  
կցուրդը

չունս ած զկնի կամաց իւրոց, զի կերակրեսցէն զԵղիա, և կերակրեսցին ի նմանէ:

### ԿՑՈՒՐԴ Ժ.Թ.

ՕՐՀՆԵԱԼ, ՄԻԱՐԴԻՆ ՈՐ Ի ՊԱՐԴԵՒԷ ՆՈՐԱ  
ԿԵՐԱԿՐԵՍ ԱՄԵՇԱՅՆ ԱՐԱՐԱՏԻ

Աստուած որ կերակրեաց զծառայս իւր ագռաւուք որ յափշտակէն զայլոց, օրինակ էր մեծատանց՝ զի նմանեսցէն թռչնոց: Զի կեցին ի ձեռս Եղիայի ագռաւուք՝ այն որ կերակրեցին զնա, ի նոցայոյն տայր նոցա: Զի կեցին ի նշխարէ ի նորա, որք վաստակեցին կերակրեցին ըզմարդարէն: Ոչ ստացաւ զհատուցումն նոցա, ի ձորն յոր հանգուցին զնա՝ յաճախիեց ի նմին զհանգիստ նոցա: Կեանք խոստացեալք եթէ գոյին թռչնոց՝ անդ հատուցանէր նոցա. արդ զի այս աշխարհի եւեթ է նոցա՝ յայսմ աշխարհի հատոյց

նոցա: Եթէ ագռաւուք որ անվարձ էին, առին զհատուցումն ի մարդարէն, զմարդիկ՝ որոց խոստացեալ է զհատուցումն, զիա՞րդ զրկեցէ բարերարն: Հաճեալ էր ընդ ձորն Եղիա, զի առանց հոգոց էր ի նմա: Սակաւ էր տիւ աղօթից նորա, և գիշերն ողջոյն՝ խնդրուածոց: Արքար ի նմանէ հեռի էր, և Յեղաբել կին նորա՝ ի բացեայ էր: Ի հանգանակաց սուտ մարդարէիցն խնայեաց զնա անապատն, խաղ՝ աղօթիցն էին նմա անդ, և ագռաւուքն՝ ի զբօսանու: Հանգիստ կատարեալ էր նմա, և զի մի աստանդեսցին միտքն նորա՝ զագռաւուն ի զբօսանս առաքեաց նմա: Առնոյր ի բերանոյ նոցա զհացն և զմիսն զոր ըերէին, և գնէր ընդ ատամամբք նոցա հաց և միս զոր նշխարէր: Որպէս համբուրեցան ընդ Ագամայ և Նոյի գաղանք և թռչունք, համբուրեալ էին ընդ Եղիայի ագռաւուք պաշտօնեայք նորա: Ել ագռաւ ի տապանէն և ոչ յաւել մտանէլ ան-

գրէն, բայց սոքա հայիւ և մսով  
դային առ նա: Գիտեմ՝ զի Էթող  
զՆոյ մինչ գաղանք և թռչունք առ  
նմա էին, նոքա յարեցան առ մար-  
դարէն իբրու միայնացաւն յամե-  
նայնէ: Ես որ կերակրէրն զնոսա  
հանապաղ՝ փախիչէլ կամէին ի նմա-  
նէ. և զԵղիա նոքա կերակրէին՝ և  
ոչ թողցին և փախչէին ի նմանէ:  
Ատեցին զշէն որ ի տապանին, և սի-  
րեցին զաւեր ջրհեղեղին. և նոքա ա-  
տեցին զշէն և սիրեցին զաւեր ի բան  
ընկերութեան մարդարէին: Ագռաւ  
որ ոչ պահեաց զմիաբանութիւն ընդ  
ամուսնոյ իւրում ի տապանին, այլ  
եթող զնա ընդվայր՝ և մոռացաւ, և  
ոչ յաւել եմուս առ նա, կայր մնայր  
առ մարդարէն հանգարառութեամբ  
և ոչ եւս մեկնէր ի նմանէ: Ագռաւ  
որկորեայ և անողորմ՝ եղեւ կցորդ  
մարդարէին, կերակրէլ և գալրմանէլ  
զնա: Զորն Քարիաթու տրտմեցոյց  
զԵղիա ջուրբքն որ ցամաքեցան. և  
զադուաւսն եւս արամեցոյց՝ զի միայ-

նացան ի բան ընկերութենէ նորա:  
իբրու գնաց անտի Եղիա, ագռաւքն  
բարբառով ինդրէին զնա. հայցէին  
զկերակուր նորա, և զընդելութիւն  
և զհամբոյր նորա: Թերեւս չոգան  
ըստ սովորութեան հասարակ աւուր  
և երեկորեայ՝ բերել, և զի ոչ գը-  
տին ըստ սովորութեան, դարձան  
անդրէն արամութեամբ: Կամ ար-  
դեօք՝ և չոգան իսկ ոչ. զի անդրէն  
իբրու գնաց Եղիա՝ օտարացան ի հո-  
գաբարձութենէն յորում էին նոքա  
առ Եղիայի: Մերկացան զսէր մար-  
դարէին՝ զի հոգասցեն զանձանց իւ-  
րեանց, որք ընդ իւրեանց և ընդ  
նորա հոգային: Գիշերի գնաց ի ժո-  
ղովրդէնէն, զի գուցէ տեսանիցեն և  
սպանանիցեն. գիշերի գնաց ի ծոր-  
ծորոյն՝ զի մի տեսցեն ագռաւքն և  
արամեցին: Զի ատեցին զնա որդիք  
ազդի իւրոյ՝ ագռաւքն որկորեայք՝  
սիրեցին զնա: Եւ զի արամեցոյց զնա  
ազատութիւն՝ գգուեցին զնա թըռ-  
չունք:

ԿՅՈՒՐԳԻՆ.

ՕՐՀԱՆԵԱԼ, ՈՐ ԵՏ ՄԵԶ ԿԵՐԱԿՈՒՐ  
Ի ԴԱՐՄԱՆԻ ԿԱՐՈՏՈՒԹԵԱՆ ՄԵՐՈՅ

Ագռաւք որ կերակրեցին զԵղիս՝  
ի ձեռն Եղիսյի կերակրեցան, զի  
ևս վարձս նոցա՝ և կերակրեցան ի  
վաստակոց իւրեանց: Երրոյեցւոց  
պակասեաց ջուր, և նոցա հայ նշխա-  
րեալ էր: Մարդարէք՝ հայի քաղ-  
ցեալ էին, և ագռաւուց՝ միս մմե-  
րէր: Եւ զի հալածեաց Յեղաբէլ  
զմարդարէսն, և կերակրեաց զնոսս  
ի տանէ իւրմէ:

Ո՞չ ասասցէ թէ զմարդարէս կե-  
րակրէր Արքար Թագաւոր, Թէպէտ  
և նոքա կերակրեցին: Զի չէր գիտակ  
այնմ որ գործեաց Արքիու առ հա-  
րիւր մարդարէսն զինա կերակրեաց  
զմարդարէսն ուստի ակն ոչ ունէին:  
Ո՞ կարէր իմանալ եթէ ի տանէն  
Արքարու կերակրին նոքա: Սակայն

կերակրեաց զնոսս որ կերակրէ ի  
սկզբանէ մինչեւ ի կատարած զոր-  
գիս մարդկան, և զանասունս և զո-  
զունս և զմուչունս երկնից: Իբրեւ  
Էտ Արքիու զոր ինչ ունէր՝ մարդա-  
րէիցն, սկսաւ գողանալ ի տանէն  
Արքարու զի արկցէ շունչ ի մար-  
դարէմն, և որ գողանալով գողանայր՝  
պարտ էր զի համար տացէ ամեն-  
այնի: Մինչ կամէր հատուցանէլ  
զիսիս, վաղվաղէաց վարեաց զնա-  
մահ: Եկին ծառայք տանն Արքա-  
րու սկահանջել զպարսս Արքիու,  
և զի ոչ մնացին նորա ժառանգու-  
թիւն, զժառանգուն ծառայս արա-  
րին: Մատուցեալ մայր նոցա առ  
Եղիշեայ և յիշեցոյց զգործս առն  
իւրայ. զի ոչ զորդիս իւր կեցոյց  
փոխովք՝ այլ զմարդարէս կերա-  
կրեաց փոխովք: Այր իմ մեռաւ,  
ասէ, և գու գիտես զի երկիւզած  
էր յԱստուծոյ, և աէր պարտուց  
եկեալ վարէ զերկուս որդիս իմ  
իբրեւ զծառայս. չէ արժան թէ ծա-

ռայեսցէ զաւակ արդարոց՝ անօրինաց։ Մի սպատրանօք կամ յերկիւցէ լծեսցին ի լուծն բահաղոււ։ Թէսկէտ և փոխ առ Ա.բգիւու, այլ Աստուած եղեւ երաշխաւոր նմա, իբրեւ զտեսուց Աստուած՝ հատոյց զպարտան Աստուածոյ։ Ասէ ցնա, ժողովեա՛ ամանս զդրացեաց և զգեղջէից քոց, և յորժամ լցցես զնոսա ջրով՝ ամանմի լի հանցես առ իս։ Ել նա ընդմի կողմն, և որդիք իւր ընդ միւս կողմն։ Ամենայն գեօղն զարմացեալ էին ընդ ունայն ամանոցն զորս ժողովեաց։ Որ տեսինն զնա իբրեւ մերձեցաւն՝ չէին կարօտ հարցանելոյ։ և որ ոչ տեսինն, յայնմանէ՝ զի ժողովէր զամանան՝ գիտացին։ Ի ծուփս էր ամենայն օք, թէ իւ իւիք լնուցու զամանան, և իւ կարացէ հատուցանել զբազում պարտան Ա.բգիայ։ Փոխեաց նա զջուրն յեղ, և փակեաց զդրունան ընդդէմ իւր, զի մի լցցի նա այսպանեալ ի մարդարէից և ի քրմացն բահաղու որ ժողովէին ի տեսիլ նորա։

իբրեւ ելից զամանան ջրով, եհան զմինն, որպէս առ պատուէր։ իբրեւ զմի ամանն արարեալ՝ յամենայն ամանսն արկանել յղետց զնա, արկ նա ի ջրոյն որ եղեւ եղ, յառաջնոյն յայլմն. և ոչ ջուրն զեղն փոխեաց, այլ եղն զջուրն այլագունեաց։ Զամանն զոր եհան առ մարդարէն՝ նոյն ժամայն յեղ շրջեցտւ. և այն ամանքն յորս նոյն արկ՝ ահա կային ի բնութեան։ իբրեւ արկնա ի ջրով ամանսն և ասէ ցորդիս իւր՝ մատուցէք եւս, և իբրեւ ասացին թէ սպառեցան ամանքն՝ գարձան յեղ ամենայն ամանքն։ Եւ զի փակեաց զդուռն տան իւրոյ ընդ երեսաց ձազանաց ի ընուշն զջուրն, եբաց նա իբրեւ ի փառս՝ ի ժամու զի գարձան յեղ։ Տեսին նշան և ետուն փառս Աստուածոյ ի վերայ երկոցունց. զի փոխեաց զջուրն ի ձէթ, և հատոյց պարտ ընդ Ա.բգիայ։ Եշան և վաճառեաց այրին և մեծատանց և աղքատաց։ Եւ տունն Ա.բգաաբուառ

գուրս նորա գային գնել եղ ի նմանե՛ :  
Աւելի քան զոր ինդրեաց նա ետ նմա  
Եղիշեա . ինդրեաց զի հատուցէ  
զպարտս իւր , և նմա զի հատուցէ  
և կերակրեսցի : Արար յանկարծակի  
մեծատուն , զոր ստացաւ նախ քան  
զամնայն :

Տեսէք որպէս հատուցանէ ստոյգն  
այնոցիկ՝ որ առնեն զողորմութիւն .  
զի ոչ միայն զոր ետուն տայ նոցա ,  
այլ առաւել և աւելի տայ : Զի զա-  
մենայն զոր աստ տայ մեզ՝ ոչ հա-  
մարի ի հանդերձեալն , զի այս տմե-  
նայն աւելորդէ , առաւեալ լինի որպէս  
ստաց :

### ԿՅՈՒՐԴԻ Ի Ա.

ՕՐՀՆԵԱԼ ՈՐ ԱՃԵՑՈՅՑ ՁՆՈՅՑ ԱՄՈՒՆԻ , Ի  
ՄԵՋ ՏԱՆ ԿՆՈՑՆ ԱՅՐԻՈՅՑ , ԶԻ ՄՐՈՒԱԿՔ  
ԵՒ ՍԱՓՈՐԲ ԱՄՈՒՆԻՔ՝  
ԽՆՈՅ ԹԱՇԿԱՐՄՇ ՅԱԿԱՆ ԹՕԹԱՓԽԵԼ .

Զի աղքատ էր կինն՝ մեծացաւ .  
զի քաղցեալ էր՝ և յաղեցաւ . և զի  
մուրանայր յամենայնէ՝ ևս նա կե-  
րակուր ամենայն ումեք : Եւ զի բա-  
խեաց զգուրս բազմաց՝ կային բա-  
զումք առ դուրս նորա : Հատոյց  
փոխանակ սակաւուց , և արար շը-  
նորհս բազմաց : Ակն բարի ստացեալ  
ունէր , զի բղխումն ալէր բացեալ  
ունէր : Գանձք արքունի ընդ նովաւ  
էին , զի բղխումնք վերնոց ընդ նո-  
վաւ էին : Ետ նա հաց քաղցելոց ,  
և եղ այրի կանանց , և ի տօնս և ի  
գլուխս ամսոց՝ առնէր հանդիսատ ա-  
մենայն ումեք : Զի գիտաց զկարիս  
քաղցելոց՝ ոչ արգել զհաց ի քաղ-

ցելոց. և զի ողորմեցաւ նմա ձրի  
Աստուած՝ ոչ արդել զողորմութիւն  
յումեքէ:

Իբրեւ մեծացաւ և փարթամացաւ  
և առ երանութիւն յամենայն ու-  
մեքէ, չարակնեաց ախտ զմիամօր  
նորա՝ և եթող զնա շունչ իւր: Ել  
ասաց, և ամբաստան եղեւ զԵղիայէ  
առ Եղիշայ. Եկիր, ասէ, յիշատակել  
զմեղս իմ և սպանանել զորդեակս իմ:  
Մոլիքն ասեն. թէ արդար է՝ ընդէր  
և մանկանն մեռանել: Հեթանոսքն  
ասեն. թէ մեղաւոր էր՝ զսափորն և  
զսրուակն ո՛ աճեցոյց: Ուրախու-  
թիւնն կնոջն դարձաւ ի սուր, զի  
անկաւ ի ձեռս քրմաց նոցա: Թէ  
նա է, ասէ, որ արդել զերկինս, դար-  
ձուացէ զշունչ որ միակին է: Զի  
եթէ լուան նմա ամոլք՝ փոխանա-  
կեցէ մի շունչ ի ձայնս նոցա: ի  
ձեռն հոգւոյ մանկանն որ դառնայ՝  
հաւատալի լինի՛ թէ արդել զան-  
ձրեւն: Յեթէ մեռեալ կեցուցանէր՝  
ոչ երկնչէր նա ի մահուանէ. եթէ

շունչ դարձուցանէր՝ ոչ փախչէր նա  
ի հեթանոսաց: Եհան զմանուկն ի  
վերնատունն, և մնաց մայրն առ ըն-  
կերս իւր: Եւ ոչ յաւուր մահու-  
որդւոյ իւրոյ եմուտ տեսանել զյա-  
րութիւննորա: ի ծործորն փախսեաւ  
ի մահուանէ, և ի Հարեփիթայ եմուտ  
ի փախուստ. և զի զերծաւ նա ի  
մահուանէ՝ որսացաւ զմանուկն ընդ  
նորա: Որ երկնչէրն ի մահուանէ՝  
մեծաբանեաց ի վերայ մահու. փա-  
խըստեայն ի մահուանէ՝ թափեաց  
զմանուկն ի բերանոյ նորա:

Իբրեւ քննեցաւ այրին այպանու-  
թեամբ աղդատոհմի իւրոյ, ևս նմա  
զորդին իւր ի գտախկոննէն իբրեւ ի  
գրանէ քաղաքին: Անդ սովլ սպանա-  
նէր զնոսա որպէս ասաց մայր ման-  
կանն. և զի ապրեցոյց զնա ի սովոյ  
անտի՝ զերծոց զնա ի մահուանէ:

Եկաց յաղօթս մարդարէն, և դար-  
ձաւ շունչ պատանեկին: Ոչ մար-  
դարէն և ոչ մայր մանկանն տեսին  
զելանել և զմոտանել շնչոյն: Եւ զի

Ետ զնա զորդին մեռեալ՝ և առ ի  
նմանէ կենդանի, անկաւ և երկիր  
եպագ մարդարէին և Էտ փառս Աս-  
տուծոյ: Ժողովեցաւ քաղաքն ամե-  
նայն ի տեսիլ մեռելցն որ Եկաց.  
ուրացան զկուռս և ապաւինեցան  
յԱստուծ՝ որ կեցուցանէ զմե-  
ռեալս:

Օրհնեալ Տէր որ ուրախ արար  
զայրին ի սովին՝ զոր հալածեաց ի  
տանէ նորա, և գարձաւ զուարթա-  
ցոյց զերեսս նորա մահուամբն՝ զոր  
հալածեաց յորդւոյ նորա:

### ԿՅՈՒՐ Դ Ի Բ.

ՕՐՀՆԵԱԼ Է ՏէՐՆ ԱՄԵՆՍԱՅԻ, ՈՐ Է  
ՀՈԴԱՅԱՐՔՈՒ ԱՄԵՆՍԱՅՆ

Դաւիթ Թագաւոր և մարդարէ  
յԱքիսոփել հարցանէր, և զի խմառ-  
տուն էին խրատք նորա, եդ զնա  
մարդարէ երկրորդ: Եւ ոչ զիրատ  
Հոշայ անարդէր Դաւիթ և որդին

նորա: Եւ զի մարդարէն լուաւ դոյզն  
մարդոյ, քանի եւս լուելցուք մար-  
դարէին: Դանիիլ արքային իաբե-  
լոնի Էղեւ խրատուք բարի խրատու,  
զի քաւեսցէ զպարտի տրովք և  
քաւելով ի վերայ անանկաց: Եթէ  
նա որ կուրացոյց զթագաւորսն, և  
սպաւեաց զորդիս թագաւորաց, և  
հրձիգ արար զտունս քաւութեան,  
և առ զսպաս պաշտամաննն: Նա որ  
չարչարեաց զսմենայն ոք չար, և  
հպարտացաւ ի վերայ Տեառն ամե-  
նեցուն, և վաթմանկանդնեան պատ-  
կերին երկրագել ընդ նորա խոր-  
հեցաւ: Խսկ եթէ այնր անօրինի գոյ  
հնար զի քաւեսցէ ի ձեռն տրոյ՝  
որպէս և խոստացաւ Դանիիլ հայրն  
հոգւոց, ո՞ արհամարհեսցէ զտրովք  
որ զայուչափ զօրութիւնս ունին:  
Զի թէ նոքօք կեայր, չիք անօրէ-  
նութիւն որ ապստամբէ ի նոցանէ:  
Որ կարօտ ես թողութեան, տուբք  
ովորմութեան են բժիշկ քո: Ձնջեա  
զմելս քո զոր գործեցէր՝ ի ձեռն

տրոց զոր տացես դոււ: Բարի Են քեզ  
տութք ողորմութեան. ի նմանոււ-  
թիւն Են մկրտութեան: Զի չեք քեզ  
հնար մկրտելցյ, գոյ հնար արդարաւ-  
նալց արովք յայնմանէ՝ զոր ետ քեզ  
Աստուած: Դիր առաջի ծառայից  
նորա. փոքուն զոր տաս՝ օրհնի բա-  
զում ինչ որ մնայ քեզ: Ոչ պա-  
հանչէ ի քին ընդ արարածոյ քոյ,  
և ոչ ընդ յղութեան և ծննդեան  
քո, և ոչ ընդ լուսոյ և ծծելոյ զօդ,  
և ոչ ընդ անարդանաց և խաչի իւ-  
րոյ, ոչ արար զմեզ նորօք պարտա-  
պանս. քանզի չէ իսկ հնար թէ  
հատուցին: Զի որչափ յաճախեւ-  
ցուք արդարասցուք ընդ այսր ամե-  
նայնի, յոյժ սակաւ է: Իբրու զա-  
մենայն ինչ նա ետ մեզ, թէ տացուք  
նմտ ի նորայոյն՝ գրէ զանձն իւր ընդ  
պարտապանս, զի դարձուսցէ մեզ  
ընդ միոյ հարիւր: Փոխանակ այսր  
որ մնայ ի մէնչ, տայ մեզ զայն որ  
ընդ մեզ երթայ: Փոխանակ այսր որ  
ոչ բոշինի, տայ մեզ զայն որ բոշ-

ինի: Ո՞ նիւթ որ ժամանակեան է,  
և շահ իւր յաւիտենից: Աստ մնայ  
գլուխն, և վարձ նորա յղարկի ընդ  
մեզ: Պաշտօնեայ է նա այսր կենաց,  
և ոչ իջանէ ընդ մեզ ի գժոխս: Զի  
անձամբ իւրով ոչ յղարկի ընդ մեզ,  
տրովք և հանգստեամբ ցրուեսցուք  
զնա, սիրելիք, զի ցանկեսցուք նո-  
վաւ զիրամատութիւնս զոր իսրա-  
մատեցաք ի ժողովելն զնա: Եւ զի  
ոչ ստացաք նովաւ զարքայութիւնն՝  
մի երթիցուք նովաւ ի գժոխս: Մի  
երթիցէն ընդ մեզ պարտք նորա, և  
մնասցէ նա ի ձեռս այլոց: Զի զբա-  
բելացին տրովք իւրովք քաւէր նա  
ի պարտեց իւրոց. որ զբազում  
պարտս թողու՝ զսակաւ պարտիս  
քանի եւս թողէ: Մինչդեռ գոյ ի  
ձեռս ձեր՝ չնջեցէք նովաւ զպարտս  
ձեր:

ԿՅՈՒՐԴ Ի Գ.

ՔԵԶ ՕՐԵՆՈՒԹՅԻՆ, ՏԵՐ ՄԵՐ,  
ՁԻ Ի ՇԵՐՄԱՅԻ ՔՈՅ ԿԱՐԱԿՐԻՆ ԱՄԵՆԱՅԻՆ  
ՀԱԱՏԱՅԵԱԼՅ

ԵՅ Ադամայ զգրախսն զամենայն,  
և արդել ի նմանէ զմի պառուղն:  
Եթող նա զամենայն ծառսն՝ և դիւ-  
մեաց ի վերայ պատուիրելցյն: Ադե-  
նայ նման է սեղանս այս մեր, և ա-  
գահութիւն՝ պատուիրեալ ծառոյն:  
Վարեսցուք ամենայնիւ որ տուեալն  
են մեզ, և օարասցուք ի հրաժառ-  
բեցելոյ անտի: Ի ձեռն միոյ պատղոյն՝  
կորոյ Ադամ զպատմուճան փառաց  
իւրոց: Ի ձեռն աւելորդ կերակրոյն՝  
կորուսանէ մարդ զազատութիւն  
իւր: Քանի ուտեմք մեք զաւելորդն,  
և ծանրանան թեւք ազօթից մերոց:  
Փոքր ի շատէ կերիցուք՝ զի թեւ-  
թեւասցին թեւք խորհրդոց մերոց:  
Զափով մատիցուք մեք առ դինի, և

կշռով առ կերակուրս: Մի անցցուք  
ընդ այս սահման, զի մի գատեսցին  
զմեզ խորհրդորդք: Լուր առաքելցյ,  
իւրու հատանէ ի վերայ կերողաց և  
արբեցողաց և հաւասարէ սպանո-  
ղաց: Ոչ, ասէ, ժառանգեսցէն զար-  
քայութիւն: Ձի որովայնիւ մերով  
կերիցուք. և ընդէր ագահեմք զա-  
ւելորդն. զի աւելորդն որ մտանէ՝  
հանէ զմեզ յարքայութէնէն: Փոքր է  
որովայն տեսլեամբ իւրով, զի բա-  
ւական է նմա սակաւ ինչ. յոյժ  
ընդարձակ է առաքինութիւն՝ և սա-  
կաւ է նմա բազում ինչ: Փոքր ի  
շատէ կերիցուք, և կայ յաւիտենից  
խոսառումն մեր: Եթէ աւնուցուեք  
զաւելորդն՝ ոչ անցանեն նախատինք  
նորա: Քաննդամք\* մեք ի պակասու-  
թիւն, ընդէր ոչ յառաւելութիւն:  
Ձի իւրու առնու ոք զաւելորդն՝ դրէ

\* Այսովէս է բառդ յօրինակին (ծնթ.  
ձեռապիր զազափարին): - Թիւրես կամի  
ասել հունականութեաւ:

զնա ընդ որկորեայս: Ի ժամանակ  
կեան սեղանոյս գոհասցուք, զի ար-  
ժանի լիցուք յաւիսենից սեղանոյն:  
Մի ի ձեռն անցաւորիս օտարասցուք  
յայնմանէ՝ որ միշտն կայ:

Են որք հասեալ Են ի գինոյ  
և յամենայն խորակաց որ առաջի  
մեր է: Զի ոչ նմանեցաք պահողաց՝  
մի նմանեցուք որկորեից: Գոհու-  
թեամբ մատիցուք առ գինի և օրհ-  
նութեամբ առ կերակուրս: Օրէն է  
զի վասն ամենայն իրիք գոհասցուք  
զժեառնէ ամենայնի:

Հրեշտակը ցանկացան սեղանոյն  
Արբուծամու. Կրիս գրիւս նաշին,  
և որթ հասցյ երից արանց: Գիսաց  
նա թէ զուարթունք Են՝ յաճախեաց  
հասոյց աւելի, զի ինշխարիէ հրեշտա-  
կաց բաշխեցէ ընտանեաց իւրոց:  
Ուաէ հուր զիբոս ինչ՝ և մնան մնա-  
ցորդք նորա. բայց ի զուարթնոցն  
ոչ մնաց ինչ, զի գարձաւ յոշինչ կե-  
րակուրն: Փոխանակ որթուն՝ խոս-  
տացաւ պտուղ, և փոխանակ նաշհոյ

երից գրուաց՝ ծագեաց ի զաւակէ նո-  
րա որ Երկրորդ Աստուածութենէն:

Օրհնեցի յարկ ծառայից քոց՝ ի  
կոխել երկրպագուաց քոց, աճեցէ  
սեղան սորա՝ յորում ուրախ Են  
սուրբք քո:

### ԿՅՈՒՐԴԻ Ի Դ.

ՕՐՀՆԵԱԼ, ՈՐ ԵՏ ՄԵԶ ԿԵՐԱԿՈՒՐ,  
ԵՒ ԽՈՍՏԱՅԻ ԶԿՐԱԽՏՆ ԱԴԵՆԱԿԱՆ

Ի միտ առցուք, Եղբարիք սիրե-  
լիք, քանի բարութիւնս ետ մեզ  
Տէր: Զի ի ծովու, և յերկրի, և յօդս  
հաստատեալ է կերակուր մեր: Հաս-  
տատաց թռչունս վասն մեր՝ հան-  
գերձ սուրբ անասնովք: Զձկունս  
գետոց յաճախեաց մեզ, և զծովու-  
ււս յաւել մեզ: Կերակուրք պէս-  
պէս համոց լինին մեզ ի մի ընչէ,  
և խորափիք անհամարք: Յայտնի է  
զի ի ձիթենուոյ լինին եղք ազգի  
ազգիք. ի դարման և ի խրախու-

թիւն և ի ջեռուցումն և ի զովացումն։ Զի և բեր որթոյ մի է՝ և չէ մի։ Մի երեւի, և այլափոխ են պըտուղքնորա տեսլեամբ և ճաշակօք։ Թոէ որչափ դարձեալ գինիս բղիւէ հանէ փայտ որթոյ, օր մի ողջ սակաւ է ինձ բովանդակել զթիւն նոցա։ Ահա լերինք լի են մրգովք, և դաշտք՝ պաղողվք ցանկալեօք։ Ծով և ցամաք վասակին բերել զամենայն պէտս մեր։ Ահա դարձեալ և նոքին ծառքն՝ պէսովէս պատուզս կարկառուն մեզ։ Զի մին բղիւէ զպարարտութիւն, և ընկերնորա զ-քաղցրութիւն։ Ետ մեզ և այլ պտուղս որ նոքօք լուսաւորին աչք մեր և ուրախ լինին նոքօք ծոցք մեր, բժշկին նոքօք ախտք մեր, և կողմանք ամենէքեան իբրիւ զանգամն զմիմեանս հոգան։ Համբարի կողմն ընկերի իւրում, և համբարի ի կողմանէ նորա։ Խթէ սէր և գութ զերկիր՝ հոգալ զծով որ շուրջ է զիւրեւ, և մեծացուցանէ և ինքն ծով զերկիրս որ

են զեզերբք նորա։ Ետ և մեղութուցուն ձրի քաղցրութիւն, որ պատուական եւս է։ Ետուն որթ և ձիթենի գինի և եղ առանց գնոյ։ Ետ կաթն սանդիեցաց, և բուսոյց խոտ անասնոց։ Զի իւանդս բանձարով գարմանեաց, և զառողջս կատարեալ՝ հացիւ։ Պատրաստեաց երկիր զսերմանս իւր և ծառք զպառուղս իւրեանց, և ոչ երկիր և ոչ ծառք պահանջեցին երբեք մաքս ի մէնջ։ Յիսուս հաստատեաց զամենայն, և ետ մեզ առանց գնոց զամենայն։ Իսկ մէք՝ զնենք և տանք գնոյ՝ զոր ինչ ձրի շնորհեաց մեզ։ Ետ մեզ հողմս և օդ և հուր և ջուր՝ ձրի։ Եւ այսպէս բղիւէ ի նմանէ ամենայն գարման առանց արծաթոյ։ Արգելին ոմանք ջուր ի ծարաւ, և մոդք, հուր՝ Ասորեստանի։ Արգելին հողմս շինուածովք իւրեանց, և զլուսաւորս յարկովք իւրեանց։ Ի մեր սակս տարածանին ամսք, և վասն մեր հոսանք նոցա։ Հողմք ի գեշերի և ի

տունջեան ահա վաստակին վասն  
մեր: Վասն մեր և արեգակն ծագէ  
հանապաղ և մասնէ, զի կոչեցի  
վաստակ ծագութն նորա, և ի հան-  
դիսս կատարելով իւրավ: Խոսնորա  
հալածէ զիսաւար մեր, տապ նորա  
հասուցանէ զպառւզս մեր: Ընթացք  
նորա չափէ տունջեան, և մասնել  
նորա իշխանութիւն խաւարի: Զի  
ահա ակամբէ է գեղեցկութիւնք, և  
բերէ հստակելեաց և քմաց՝ բիւր  
հաշակք և համբ:

Օրհնութիւննմա վասն ամենայնի:

#### Կ Յ Ո Ւ Ր Դ Ի Ե .

ՕՐՀՆԵԱԼ ՈՐ ԿԵՐԱԿՐԻ Ի ՄԵԽՈՒԹԻՒՆ  
ԻՒՐՄԻ ԶԱՄԵՆԱՅՆ ՔԱՂՅԵԱԼՈ ԵՐԿՐԻ

Զանձն իւր հրաւիրեաց առ Զակքէ  
Տէր մեր, իբրեւ եաես զմիսս նորա՝  
զի ծարաւի էր օտարանալ ի մեղաց  
և յագահութիւնէ իւրմէ: Ի մտանել  
Տեառն ի տան նորա՝ բնակեցաւ սէր

ի սրտի նորա: Մերկացաւ միանդա-  
մայն յամենայնէ, ի յափշտակէլոյ  
և ի ժառանդելոյ: Դատեաց զանձն  
իւր յօրինաց, և չորեքին դարձոյց  
զյափշտակեալն. և յաւել եւս յօ-  
րինացն ի բաշխել զկէս ընչից իւրոց:  
Նախ կատարեաց զստուգութիւնն,  
և ապա սկսաւ յողորմութիւն: Հա-  
տոյց նախ զոր պարտ էր, և ապա  
ես փոխորդաց: Ի գարձուցանել զա-  
մենայն զոր զրկեաց՝ զպարտս իւր  
հասուցանէր. և ի բաշխել զկէս  
ընչից իւրոց՝ փոխ տայր Աստուծոյ  
իւրում: Ո պարտապան, որ յան-  
կարծակի եղեւ պարտատէր: Հատոյց  
մարդկան յերկրի և Աստուծոյ փոխ.  
Ես ի բարձունս: Առաքեաց ընդ չորս  
կողմանս՝ ոչ զի ածցեն զպարտա-  
սլանս իւր, այլ զի ածցեն զյափշտ-  
տակեալ՝ որ դարձան և եղեն պա-  
հանջող: Ազաղակէր նա խնդալով,  
թէ, առէք յափշտակեալք, զգանձո  
ձէր, և աւերեալք՝ զստացուածո  
ձէր: Զորոց առեալ էր սատեր մի

մարին առին չորեքին և ելին։ Եւ զուրոց յափշտակեալ էր զստացուածմ՝ առ զնա բազմապատիկ։ Ժողովեցան և պարտապանք, զի լուան զձայն թողութեան, առին և ելին ինդութեամբ զգրաւականս և զմուրհակս իւրեանց։ Զարմանք տեսանել էր ի տան Զակեէին զյափշտակեալսն զայնս, և զաղքատ յափշտակեալքն առին զստացուածս իւրեանց, և աղքատքն զդարմանս իւրեանց։ Մաին մերկք՝ և զգեցան, և բոկք՝ ելին ադուցեալք. քաղցեալք՝ լցան և նշխարեցին, և կարօտեալք՝ պարկութիւն։ Ետ ծառայից զազատութիւն, և պարտապանաց զգիր իւրեանց։ Ետ և վարձս ընդ զրկանաց եկաց և սկանդիտաց։ Մեծ զարմանք գործեցան փոփոխմամբն որ եղեւ անդ, զի աւարողն եղեւ աւարեալ, և յափշտակողն՝ յափշտակեալ, իբրունցին էր՝ և չէր նոյն։ Ետ զի այլակերպեցաւ յառաջին այլպանմանէն. զի այր որ զրկեր զամենայն ոք՝ զիւրն

ևւս սկսաւ տալ այլոց։ Յափշտակեալքն որք առին՝ գոհանայինն, և Զակեէ ուրախ էր ի տալն իւրում։ Յառողաց և ի տուողաց՝ ել անդ օրհնութիւն Որդւոյ օծելցյ։

Այս Են հանդիտոք ճշմարիտք՝ որ սոքօք հաշտի Աստուած, որ հանգուցանէ զծառայս և զազատս, և ըզպարտապանս հանդերձ աղքատովք։ Ի հանդստեանն Զակեէի ամենայն ուրեք լի էր գոհութեամբ բերան իւր։ Մի հանգուցուք զանձինս սակաւոց, և ցաւեցուցուք զսերաս քաղմաց։

Եւ զի նստուցեք զմեղ սիրելիք առ այս սեղան ժամանակեան, նըստուցէ զձեղ արքայն Քրիստոս առ սեղանն իւր յաւիտենական։

## ԿՅՈՒՐԴ ԻԶ.

ՕՐՀԱՌԻԹԻՆ ՈՐԴԻՌՅ ՕՆԵԼՈՅ ՈՐ  
ԱԵՐԱԿԻ, ԶԱՄԵՆԱՅՆ ՅԻՒՐՄԵ

Հրեշտակք, որ ոչ կերակրին՝ ոչ  
խափանին յօրհնութենէ: Մեր զի  
լցաւ կարօտութիւն՝ գոհասցուք  
զնմանէ զի յագեցաք: Թէ հրեշտակք գոհանան՝ որ ոչ աշխատեն զարարածս որ պաշտեն, արարածք զիա՞րդ լռեսցեն յօրհնութենէ: Յամենայն ժամութէ գառարկ ոք է,  
յայսմ ժամու չէ օրէն խափանէլ: Եթէ մինչ քաղցեալն էաք օրհնեցաք, քանի՞ եւս այժմ զի յագեցաք: Յաւուր պատարագի քո մի տար տեղի մարդոյ արանջել զքէն: զի ելանէ արատոնջնորա և ասկախտ առնէ զալատարագն քո: Զի գոհանան զքէն աղքատք՝ գոհասցին զքէն և պանդուխաք: Մի առնուր գույնաղատաց, և տացես զայն տուրու

այլոց: Զիա՞րդ համարեսցի զայն քեզ Տէր քո, զի ոչ ի քումմէ ետուրդու: Եթէ այլոց է տուրք քո՞ ո՞ւմ դարձի վարձ ընդ այնորիկ: Տուք ի ձերմէ, մեծատոնք, զի ձեզ համարեսցի զայն Աստուած: Մի առներ բարի յընչից անանկաց, և փառաւորեսցիս այնու որ ոչ քո՞ է: Զի՞նչ հարկ առնուել յաղքատէ և տալ միւսում աղքատի, զմին քաղցեցուցեր, և զմին լցուցեր, և ուր է անդ արգարութիւն քո: Բարիոք առնես զի կերակրես զաղքատս, բայց գուցէ զմեծատունս աղքատս առնիցես: Զի չէ մոռացեալ ամենագիտիւն՝ թէ ուսարի՞ է ժողովեալ պատարագն քո: Ոհ, որ զգեցուցանես զաղքատս, գուցէ մորթիցես զմորթ տնանկաց: Որ տաս հաց քաղցելոց, մի թլիւատեսցես զի՞նչս կարօտելոց: Որ հոգաբարձուդ ևս աղքատաց, մի անփոյթ առներ զանանկաց քոց: Ահա աղքատք այդ են ընդ քեւ հանգն զանձինս բնակակցաց քոց: Զի՞նչ

Հարկ է աալ արտաքնոց, իբրեւ աչա  
կարուեալք Են ի տան քում. մի հո-  
գար զարտաքնոց և անփոյթ առնիցես  
զներքնոց: Մի օր հնեսցեն զքեղ ար-  
տաքիկ և անիծանիցեն ներքինք: Մի  
ժողովեր արտաքուսա երանութիւն  
և ի ներքուսա վայ դառնութեան:  
Նախ ի ծառայս քո արդարացիր,  
և յորժամ լցցես զպէտո նոցա՝ կա-  
տարեսջիր և արտաքնովքն:

Յոր՝ որ ի վերայ ծնդաց իւրոց սը-  
նցց զորբս, այսպէս առէ. թէ անար-  
դեցի երեք զդասաստան ծառայից  
իսոց յամենայն իրո՛ յորս դատե-  
ցան ընդ իս: Ո որ լինիցի նմանող  
արովք՝ նմանեսցի նմա և քաղցրու-  
թեամբ իւրով: Լցուսցէ զքաղցրու-  
թիւն արտաքնոց, և հանդուսցէ ըզ-  
հոդիս ներքնոց:

### ԿՑՈՒՐԴԻ ԻԵ.

ՕՐՃՆՈՒԹԻՒՆ, ԿԵՐԱԿՐԻՉ ԱՄԵՆԱՑՆԻ՝  
Ի ՔԱՂՅԱԿԱՅ, ՈՐՔ ԼՅԱՆ ԵՒ ՆՇԽԱՐԵՑԻՆ

Զի ուրախ եղեւ Զակքէոս որ ետ  
նմա քաւութիւն մեղաց, կեանս ընաշ-  
կեցցյ ի տան նորա, որդի Աբրահա-  
մու գրեաց զնա: Փարիսէցին կոչեաց՝  
և անարդեաց զնա. ոչ ետ նմա յայս-  
ցանէ: Եմուս և առ քաւութիւն  
չինն մեղաւոր՝ որ կարգաց առ նա:  
Մեծ ճաշ փարիսէցւոյն ծանու ըն-  
չեւ եկաց ի բաց, արտասոււցն ետ  
քաւութիւն, և նա ընկալաւ յան-  
դիմանութիւն: Անարդեաց զսեղան  
փարիսէցւոյն՝ զի ետես այպանու-  
թիւն ի միտոն նորա: Ետ քաւութիւն  
այնմ որ մեղաւ, զի ետես զիղջ ի  
խորհուրդս նորա, այպանութիւն  
փարիսէցւոյն՝ ոչ ինչ կնա:

\* Աստ պակասէ մի թուզթ՝ որ առնէ  
ըստ օրինակին ԺԷ առղս բանից. ընդ որս  
է և գլխակարգութիւն Ի՛ կցրդին:

ԿՅԱԽՐԴԻ ԻԹ.

ՕՐՀԵՆԵԱԼ է ԱՅՆ ՈՐ ԶԻՆ ԻՒԹՔ  
ԿԱՐՈՑ, ՈՐ ԽՈՇԻՆ ԶԱՄԵՆԱՅՆ ԿԱՐՈ-  
ՏՈՒԹԻՒՆՆ ՄԵՐ

Յուրբաթու հաստատեաց զԱ-  
դամ, ի նմին և զանասունս և զգա-  
զանս: Ի նմին աւուր յորում եղեն՝  
գիտացին եթէ զի՞նչ է կերակուր:  
Բաւական եղեւ խոտ անամեռց, և  
բանջար վայրի՝ երեսց. և մարդոցն  
չեղեւ բաւական գրախան երանու-  
թեան զոր ետ նմա: Եւ այսպէս ամե-  
նայն սովուն անարդէ զբանջար՝ որ  
սպանանէ զնա, և ընտրէ զարօն՝ որ  
կեցուցանէ զնա: Խակ մարդ, խմա-  
տուն քան զամենայն՝ փոխելացաւ  
քան զամենայն: Զի սովուն հոգայ  
զկենաց իւրոց, և նա ընթացաւ ըս-  
պանանել զանձն իւր: Որդիք Ադա-  
մայ նմանք էն Ադամայ, զի ի վերայ  
մանանային արտնջեցին՝ օձք խարա-

մանիք ծակոտեցին զնոսա, որք ի  
վերայ հովոյ ոչ արտնջեցին: Մինչ  
դեռ միաբանք էին անաստնէք՝ մի  
ճապակ էր ամենեցուն: Եղեն բա-  
ժինք ի միջի նոցա, փոխանակ զի  
ոխացան նոքա ընդ միմեանս: Առիւծ  
բանջար ուտէր, և գայլ խոտ Ճա-  
րակէր. որպէս ուտէին ի՛ տապա-  
նին զամն ողջոյն ջրհեղեղին: Ոչ  
գառինս գայլոցն եմոյծ, և ոչ ոչ-  
խարս առիւծուցն\*: զի յարդ եմոյծ  
անասնոցն, և խոտ վայրի էր... ի  
տապանին արանջեցին... յարդ և  
խոտ, և ոչ խոկ զ... բաւեցին իբրու-  
ճաշակ... գալար որպէս զի յաւ...  
մի սեր էր անասնոց և մի բնութիւն  
ամենեցուն: Նոյնպէս և յա... յու-  
րում եղեն. քանզի չեին ոխացեալ  
ընդ միմեանս. վասն որոյ... բակաւ  
և ոչ տեղեւաւ աւ... ին նոքա ի մի-

\* Յոյժ խանգարեալ է ձեռաղիբն, այլ  
է թերի: Ծառ իմաստին՝ շրջեալ որդիք-  
յաւ կարդ կցրդիս: Զամանէ տես յէլ 10:

մեանց. այլ յորմէ՛ հետէ բաժանեցաւ  
մարդ ի ձեռն պաղոյն՝ յԱստուծոյ,  
բաժանեցան և նոքա յայնմանէ՛ որ  
եղեւ ի պատկերն Աստուծոյ. կու-  
րեաւ գրախոնն երանութեան, և նոքա  
կորուսին զարօտն... անց: Նա եկն  
ի խոտ, և նոքա պահեցան ճարակել  
զիուշս... արութիւն. եկն ամենայն  
ի պատճառս գլխոյն՝ ամենայն եկն  
ի խոտ անիծեալ... եկն ուտել զնա:  
Գա... ացան... դիականց և... ոսկը  
յարաց, անաս... ուտել փուշ, և  
առցի հող... եալ. քանզի ոխացան  
ընդ... և օտարացան նոքա ի մի-  
մեանց: Սուրբ անասնոցն խստա-  
ցաւ խոտ, և պղծոցն՝ մարմին մար-  
դոյ: Շփոթեցաւ ամենայն ինչ ի ձեռն  
իշխանին ամենայնի. հաստատեաց  
զնա ի կազմած ամենայնի: Խ Տեանե՛  
չէն և ամենայն իմաստութեամբ,  
եղեւ ամենայն...:

### ԿՅՈՒՐԴԻ Լ. \*

...(Եր)թայր գայր նման եղեգան.  
ինդրեաց զնա ջուր, զի պատկա-  
ռեաց ինդրել ի նմանէ հաց. զի  
ետես եթէ ընթացաւ բերել նմա՝  
յաւել և ինդրեաց զնա հաց: Եղիս  
որ արգել զերկինս՝ ի Հարփալը հաց  
մուրանայր. երդուաւ նմա, ոչ որ-  
թուք, այնու որով երգնուին Հեր-  
բայեցիքն, և ոչ գարձեալ կռովքն՝  
որով երգնուն քանանացիքն: Կեն-  
գանի է, ասէ, Տէր, թէ գուցէ,  
բայց եթէ մի ափով ալեր, և աչա-  
քաղեմ երկուս կրկուսս, զի եփեալ  
կերիցուք ես և որդեակիք իմ և մեռ-  
ցուք: Գիտաց մարդարէն թէ որպէս  
կերակրեաց ի ծործորն զկերակրիչ  
իւր, նոյնպէս եկն կերակրել զկինն

\* Զայս, և զայլ եւս զիլոցն թուան-  
մարտ ֆջ, լ, խի, խի, խի, խի, խի, խի, ն,

մեղէն եղաք թերի զոլով յօրինակին:

որ պատուիլուցաւ կերակրել զնա: Քաղցևանն էւս քաղցելց քան զինքն սպասահեաց՝ և զգեցաւ զրամութիւն. իսկ Աստուած, որպէս և դըրեալ է, լուսաւորեաց զաջս երկոց ցունց: Խօսեցաւ հոգի ի բերանոյ՝ որ յաճախիւացն և չարչարեցաւ. օրհնեաց զսափորն և զեղչեւրն, և ետ աճումն երկուց ծոցոց: Հաւատաց նմա իրբեւ մարդարեի՛ իրբեւ ոչ ետես ի նմա նշան, և զի ել յուսահատութեամբ՝ եկն և մուտ յուսով մեծաւ: Զի արամեալ էր յեւանելն իւրում՝ զուարթ էր յոյժ ի մտանելն իւրում: Զի յերթալն իւրում լուելեայն երթայր, գարձաւ նա մեծաւ տագնապաւ: Արկ զձեռն իւր ի սափորն հանել զափոլ զալեւրն որ ի նմա, և գարձաւ կրկնեաց արկ զձեռն իւր՝ և ահա ունեին: Եզիւայ զհարիւր մարդարես կերակրեաց սակաւ հացիւ: Կերան քաղցեալքն և նշխարեցին՝ ուսափ ոչ ակն ունեին: Եւ բեր պատանի մոլաթուղ սպա-

նող յանուն կերակրոյ. խափանեցաւ մահ ալերբ, և կերան՝ ուսափ ակն ոչ ունեին: Անկաւ ի գուբ Երեմիա, և անփոյթ արար զնմանէ ժողովուրդ իւր: Բարեխօսեաց զնմանէ Քուշացին, և ել ի ձեռն այնը զորմէ ոչ կարծէր: Պակասեաց գինի ի հարսանիս, և զի մի լինիցի ծալլը փեսայն՝ փոխեաց Տէր մեր զջուր ի գինի, զոր ոչ ակն ունեին: Քաղցեան հաղարք մարդկան յանապատին՝ երկիցս անդամ, և չեղչեաց ձուկն և հաց՝ ուսափ ոչ ակն ունեին: ԶՊակբէ յափշտակիէ, այլոց յօժարեցոյց բաշխել զսացուածս իւր: Հանդերձեցան աղքատք և արանիկք՝ ուսափ ոչ ակն ունեին: Ի նաւէն իրբու քաղցեալ էին, ելն աշակերտքն՝ և գտին հաց և ձուկն ի վերայ կայծականց՝ ուսափ ոչ ակն ունեին:

... (աճեաց) ափով ալեւր անդէն ի անզւոչ. եթէ ոչ զի փութացեալ էր հանել զհաց մարդարեին, ոչ տայր

գուշ ձեռին իւրում յաճախել կերակուր մարմնոյ իւրում: Մի ձեռն ի հայս անդ էր, և միւսովն եւս՝ հաներ ալեւը: Փչէր ի կրակ շրթամբք իւրովք, և հանելին ալեւը մատունք իւր՝ մինչեւ եղեւ հայսն յեփել: Մեծացաւ նա ի ձեռն ալեւըն: Հցաւ ըերան իւր գոհութեամբ ըստալեւը որ լցաւ նմա: Եշան նախ մարդարելին, զի հանգուսցէ նախ զկարօս քաղցելցն: Ասաց զնա խնդալով, թէ անեաց ալեւըն որպէս ասացէր. աչտ զշեզ ալեւըն շեզջեալ է իմ, և ափով ալիւրն անդէն ի սափորն: Զի պատահէաց քեղ քաղց առ դրան՝ ահա ի տան լիսութիւն մեծ: Եւ զի ընդ առաջ եղեւ քեղ արամութիւն, եկ մուտ ուրախութեամբ ի յարկս մեր: Եւ իրեւ ոչ ինչ հարկ պէտք էին եղոյ իրեւ հացի, բազմացաւ ալեւըն բանիւ քո, և եղն ի ձեռն պատգամի քո: Ո դուշակեսցէ ի Հարդիաթ վասն սբանչելեացն որ ի տան մերում: Զի ածեր զսափորն ի

յլութիւն, և զեղջեւըն՝ յաճումն բնակաւոր:

Քրիստոս օրհնեաց զերկոսին, օրհնեսցէ զյարկս երկրպատուաց իւրոց, զի տեսցէ զմիւսս սրբոց իւրոց և տացէ աճումն խնդրովաց իւրոց: Զկենդանիս և զննջեցեալս ձեր քաւեսցէ յաշխարհն երկրորդ, ուրախ լիջէք առ սեղան նորա՝ որ աստ ուրախ արարէք զծառայս նորա:

### ԿՅՈՒՐ Դ Լ.Ա.

ՕԲՀԱՌԻԹԻԽՆ ՏԵԱՌԻ ԲԱՐԵԲԱՐԻ, ՈՐ ԿԵՐԱՐԵԱՅ ԶԱՐԱՐԱՅ ԻՒԻ

Աւրահամ սիրիչ աղքատաց, այն որ հրեշտակք իջին առ նա, ընթացաւ և ընդ առաջ աղքատաց, և ետես ինոսա այլակերպութիւն: Առ գուռն վրանի իւրոց նասէր ի տօթաժամու, որպէս գրեալ է: Եւ իրեւ զարմացեալ էր ընդ յայտնութիւնն զոր աեսին ի նմին ժամու. յայտնութիւնն զոր

թիւն՝ զոր ետ ընդ ետ առաջնոյն՝  
Եղեւ նմա ի գէմս աղքատաց : Ընթա-  
ցաւ ընդունել զօտարս՝ և պատահե-  
ցին նմա հրէշտակք, կարծեալ եթէ  
մարդիկ իցեն : Յուք՝ որ ի վերայ  
միոյն, թոյլ տայր խորչէլ թէ զուար-  
թունք իցեն : Տեսիլն ամենեցուն չէր  
հաւասար, զի փառաւորութիւն որ  
ի վերայ միոյն՝ մեծ էր քան զփառս  
երկոցունցն : Յուք երկոցունցն՝ չտ-  
փով էր, և երբորդին՝ տանց չտ-  
փոյ : Եւ զի ետես Արքասմ՝ թէ և  
նոքա որք եկին ընդ նմա՝ խորչէին  
ի նմանէ, ուզգեաց զհայցուածս իւր  
առ մին անդր, զի եղեն նմա եր-  
կուքն եւս օրինակք: Արդարն սկսու-  
խնդրել ի միոյ անտի իբրեւ յԱւ-  
տուծոյ . Մի զանց տաներ զտամբ  
ծառայի քո: Տօմն ոչ արգել զԱւ-  
րքամը ընթանալ յանդեայն ոտիւք  
իւրովք, և զԱւառ հաղորդեաց ընդ  
իւր զի արքացէ երիս գրիւս բազարչ:  
Ետուն գրոհ տունն Արքահամու՝ զի  
տեսցն զիջանել զուարթնոցն: Քա-

նի հայէին աեսանել՝ քաղցնուին  
աչք նոցա զշուքն: Այն օր էր ու-  
րախութեան մեծի ծառայից և ազա-  
տաց և տերանց: Որք ընդ աղքատացն  
ուրախ լինէին, ընդ զուարթնոցն  
քանի եւս արգեօք: Ժողովեալ էին  
ծառայքն առ Աբրամ, և ազախ-  
նայքն առ Արրա: Խափանեցին զա-  
մենայն իրս՝ զի հայեսցին ի նոր  
աեսիլն: Զոտա նոցա լուաց ձեռօք  
իւրովք, և զծառայս իւր ոչ արար  
չուպ: Հայս եփեաց Սառայ և ոչ-  
հովեաց զազախնայս իւր, և զզուար-  
թունս պատուականս քան զամե-  
նայն՝ ինքն անձամբ իւրով պա-  
տուեաց: Առ կողի և կաթն և զորթն  
հանդերձ հացիւն՝ և եդ առաջի:   
Ոչ նստաւ առաջի նոցա, այլ յոտն  
եկաց և պաշտեաց զնոստ: Յագեալք  
լցուցին զքաղցութիւն զոր զգեցան  
ի վայրկենի միոջ, և միսիթարեցին  
զԱւառյ՝ զի առացէ որդի որում քաղ-  
ցեալ էր ի վաղէ: Ասէ ցնա: Ի սոյն  
ժամանակի եղիցի քեզ որդի ի Աւ-

ռայէ : Անւաւ Ատռայ, և բաժանեցան  
միաք իւր ի խոսամանէն . Աճումն  
զիա՞րդ լինիցի ինձ, զի ճանապարհ  
կենաց անց զինեւ : Ոչ միայն ես ա-  
ռանցիալ եմ, այլ և աէր իմ Արքա-  
համը ծերացեալ է : Անդաւակն ոչ  
ինդրիաց նշան ի նմանէ, և ինքնամբ  
ետնմանշան՝ զի գուշակեաց զծած-  
կեալսն զոր նիւթեաց ի ներքոյ խոր-  
հուրդ նորա : Ապա յանդիմանեաց  
զծալր նորա առաջի բազմաց, և նա  
ժիսեաց, թէ Ոչ ծիծաղեցայ : Յան-  
դիմանեալ լինէր ծածուկ ծաղուն՝  
և ժիսակը վասն արտաքնյոյն : Պա-  
տուհասէր զիսորհուրդս նորա՝ զի  
ծիծաղեցաւ . յորովայնի իւրում, և  
ժիսակը բերան ընդ չնոյ, թէ ոչ  
ել ծալր ընդ շրթունս նորա : Ատու-  
դէր պատուհաս սպատուհասչին՝ և  
բերանն բարիոք ժիսակը : Եւ Արքա-  
համը որ կայր առ նմա, վկայեաց թէ  
ոչ շարժեցան շրթունք նորա : Հիսա-  
ցաւ Արքահամը, և երկեաւ տալ պա-  
տասիսնի ընդ Ատռայի . զի թէպէտ

և ոչ ծիծաղեցաւ՝ գիտէր թէ ի միտս  
իւր ծիծաղեցաւ :

Ք Օրհնեալ է որ ուրախ արար  
զԱրքահամ ի ձեռն պաղց որ ի Սա-  
ռայէ ամլոյ՝ որ եղեւ յաղդ բազում,  
յորմէ ծագեաց արքայն Քրիստոս :

### ԿՅՈՒՐԴ Լ.Բ.

ՕՐԾՆԵԱԼ, ՈՐ Ի ԶԵՌԱ ՍԵՐԵԼՈՅ ԻԿՐՈՅ՝  
ԿԵՐԱԿՐԻ ԶԱՇԽԱՄՆ ԱՐԵԻ ԻՒԲՈՎ,

Առաքեցան զուարթունքն ի տուն  
Արքահամու ցնծացողի ընդ առաջ  
կարօւելոյ, զի տացեն նմա ի ծե-  
րութեան իւրում որդի՝ զոր իւրն-  
դրեացնի մանկութեան իւրում : Յետ  
ծերութեան Արքահամու և մաշելոյ  
Ատռայի կնոջ նորա, խոստացան  
տալ հարիւրամէնին որդի : Յայտ-  
նեցին և Ատռայի՝ թէ ի ոյն աւուրս  
Եղիցի որդի Ատռայ : Զի Երկեաւ՝  
ժիսակը . իւրեւ յանդիմանեցաւ՝  
սուտ համարեցաւ ստութիւնն ըդ-

նել այսմիկ: Զինի աւուրն յղացաւ  
Ատութեամբ՝ զսութիւն իւր կա-  
մեցաւ ծածկել, զի երկեաւ: Զուար-  
թունք այն հոգեզէնք՝ ընտանեցան  
ընդ կերակուրս, զի զնմանութիւն  
մարդկան զգեցան: Զիերակուրմարդ-  
կան կերան՝ և զԱբրահամ գողումն  
կալւ: Ի միտ առ, եթէ Տէր զը-  
ւարթնոցն ընդ զուարթունս խո-  
նարհեցաւ, նստաւ առ սեղաննորս:  
Աիրա իւր պարկեշտ և գոյն իւր հա-  
տեալ: Ի ժաման իրբեւ մերձեցաւ  
լուանալ զոսս Տեսան իւրոյ, որ  
վաստակեցան և Եկին առնա: Երարձ  
զորթն ուսովք, զորմէ ասացն թէ  
ծերացաւ տէր իմ: Ծէպէտ և մարմնով  
ծերունի էր, այլ սիրով սրասանի  
էր: Իրբեւ հանդուցին զԱբրահամ  
առնելով զամենայն զոր ինդքեաց,  
և ուն վարձ վաստակոց նորս, զի  
Եղիցի որդի կարօսութեան նորս:  
Որ հաւատացեալ էր իրբեւ զԱբրա-  
համ, առէր՝ թէ գիւրին է այս. և որ  
երկմիա՝ կարծէր թէ չէ մարթ լի-

բով զնյն խայտառակիչ սասոց:  
Ատութեամբ՝ զսութիւն իւր կա-  
մեցաւ ծածկել, զի երկեաւ: Զուար-  
թունք այն հոգեզէնք՝ ընտանեցան  
ընդ կերակուրս, զի զնմանութիւն  
մարդկան զգեցան: Զիերակուրմարդ-  
կան կերան՝ և զԱբրահամ գողումն  
կալւ: Ի միտ առ, եթէ Տէր զը-  
ւարթնոցն ընդ զուարթունս խո-  
նարհեցաւ, նստաւ առ սեղաննորս:  
Աիրա իւր պարկեշտ և գոյն իւր հա-  
տեալ: Ի ժաման իրբեւ մերձեցաւ  
լուանալ զոսս Տեսան իւրոյ, որ  
վաստակեցան և Եկին առնա: Երարձ  
զորթն ուսովք, զորմէ ասացն թէ  
ծերացաւ տէր իմ: Ծէպէտ և մարմնով  
ծերունի էր, այլ սիրով սրասանի  
էր: Իրբեւ հանդուցին զԱբրահամ  
առնելով զամենայն զոր ինդքեաց,  
և ուն վարձ վաստակոց նորս, զի  
Եղիցի որդի կարօսութեան նորս:  
Որ հաւատացեալ էր իրբեւ զԱբրա-  
համ, առէր՝ թէ գիւրին է այս. և որ  
երկմիա՝ կարծէր թէ չէ մարթ լի-

թիւն ընդ Արքահամ։ զի արժանի  
եղեւ զուարթնոյն, և օրջնեցաւ ի  
մէջ սմբուլ ամուսնոյ իւրում։ Մեծ  
էր նա հաւատովք, և կատարեալ  
յամենայն պատուիրանս, և ծնունդ  
Սառայի, ոչ ինչ եւ՝ այլ աղքատ-  
սիրութիւնն։ Հանդոյն լերուք որ  
զառւրս տայք, և նմանեցէք մօր մե-  
րում Սառայի։ Ստացարուք իւրեւ  
զնա ժուժկալութիւն, զի միսիթա-  
րէոջէք երագ նման նորա։

Հ Յորհեալ այն՝ որ ոչ զլանայ  
զվարձու ջրոյ, որպէս երգուաւ, և  
զի ամենայն իւիք ուրախ եղեաք՝ ու-  
րախ լիջէք առ սեղան նորա։

### ԿՅՈՒՐԴ 1. Գ.

Ի ՔԱՂՅԵԼՈՅ ՈՐ ԼՅՈՅ ԵՒ ՆՇԽԱՐԵՅԻՆ,  
ՔԵԶ ՕՐՀԱՅԻԹԻՒՆ, ՏԵ՛Ր ԿՎԵՐԱԿՐԻԶ

Մի եղիցուք օրինակ յոռի բար-  
եքոց, և չարահաւաց։ Բարեքոցն  
խորշէլ ի մէնջ, և չարացն նմանել

մեզ։ Ըստ քաղցի մերում կերիւ-  
ցուք, և յաւելորդն մի մերձեսցուք,  
և յոյժ գինւոյ մի ցանկացուք։  
Ուխտաւորք ժողովրդեանն՝ իբրու-  
նմանութիւնն է ուխտաւորք մերոց։  
Հատուցեալք եղեն ի գինւոյ, և օտա-  
րացան բնաւին յորթոյ։ Ոուրբ մար-  
դոց և կուսանաց քանի տգեղ է զի  
հարկանիցի հոտ գինւոյն ի բերանոց  
նորա, կամ գոյն գինւոյ յերեսս նո-  
ցա։ Յանկութեանց սրաի յաղթե-  
ցաք, ցանկութիւն գինւոյ մի յաղ-  
թեսցէ մեզ։ Եւ զի ամենայն իմիք  
ցանկայ մարմին, յաղթութիւն օրէն  
է առնուլ։ Ժողովրդեանն՝ որ յա-  
նապատին էին առողջքն՝ ի սովոյ  
բեկեալ էին. և հիւանդք և ախտա-  
ժէաք նոցին՝ ի նեղութեան ծիւրեալ  
էին։ Որդի արարչին ամենայնի ոչ  
միսիթարեաց ի ձեռն գինւոյ զքաղ-  
ցեալս և զշիւանգս նոցա։ Հացն զոր  
բազմացոյց՝ հալածեաց զքաղցն որ  
ի մէջ սովելոցն, և առողջութեամբ  
նորա՝ սպառեցաւ հիւանդութիւն

Հիւանդաց նոցա: Զքաղցեալմն՝ հաց  
յիւ ուրախ արար, և զախտաժէտսն՝  
առողջութէամբ: Փոխանակ գինւոյ՝  
հաց յաճախեաց, և փոխանակ ցըսյ  
առողջութիւն: Արդ, զի ունիմք զա-  
ռողջութիւնն, մի մերձեսցուք առ-  
դինի, որ բնակեցուցանէ գողգոջ յա-  
ռողջո՞ւ որ հանապազ ըմպեն դնա,  
զի մի աստանդեսյէ զմիսո նոցա:  
Եւ զի աշխարհականք զգուշանան ի  
նմանէ, որչափ եւս առաւել սուրբք:  
Զի երկրաւորք հիւթացան ի նմանէ,  
փախեցն ի նմանէ երկնաւորք:

Այն որ յաճախեաց զհացն յա-  
ռապատին, կարէր նա հաստատել  
զգինի: Արար նա զպիսոյն, և եթով  
զայն՝ որ չէրն կարի պիտոյ: Յաւել  
եւս և յաճախեաց հաց, և չեղեաց  
ձուկն կարօտելոց: Զքաղցութիւնն  
հացիւ ելից, և զծարաւն ջրով ան-  
ցոյց: Եւ զինի կենդանանալոյն՝ հաս-  
տառեաց հուր և հաց և ձուկն: Այն  
որ հաստառեաց զայսոսիկ անդ, ոչ  
կամեցաւ հաստառել զգինի:

Ի մէջ կանայ զի հաստատեաց  
զգինի ծանօթք էին Մարեմյա, և  
ոչ վայելէր եթէ հարազատք մօր  
Տեառն մերոյ կարօտասցին. զի մի  
լինիցի մայր նորա ծաղր, և աղցն  
ամենայն ի կորանս: Ի ձեռն գինւոյն՝  
անուսնի արար զառչմն կարօտ և  
աղքատ: Մինչեւ եկեալ էր Տեառն  
մերոյ զինի ի փոխ առնուլ կամէնն.  
և երբեւ եկն անդը Տէր մեր, բաշ-  
խեցին զինի ընդ ամենայն կանայ:  
Տրամութիւնն որ նախ քան զգալ  
նորա՝ մերժեցաւ յետ գալոյ նորա:  
Կարօտութիւնն եաևս զԱստուած ի  
տան փեսային՝ և սրացաւ ել:

Օրհնեալ Հայր և Որդի և Հոգի  
Սուրբ, ի քալցելոց որ կերան և  
նշխարեցին:

ԿՅՈՒՐ Դ Լ Դ.

ՔԵԶ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ի ՏԻԵԶԵՐԱՅՑ, ԿԵՐԱԿՐԻՉ  
ԱԾԽԱՐՀԻ, ԳԹՈՒԹԵԱՄՄՅ ՔԱՎ,

ԶԵ օրէն զլանալ սրտի զխրախուռ  
թիւն՝ զոր հսկս ակն, և ոչ բերանոյ  
տժդոհ լինել զայտմանէ՝ զոր ճա-  
շակեցին քիմք: Զի աշխատութեամբ  
ժողովեցան, և վաստակով եւս կազ-  
մեցան: Զի ահա ձրի եղեալ է ա-  
ռաջի՞ օրհնութիւն ձրի տացուք: Զի  
որչափ օրէն է տալ նմա, այս յոյժ  
մեծ է քան զմեզ. զչափ կարի մե-  
րում տացուք նմա՝ և աւելի չտ-  
մարի զայն: Եւ զուարթունք, որ  
բնակաւորք են, ոչ բաւեն հատու-  
ցանել զպարաս իւրեանց: Զի հրեշ-  
տակք պարտեցան յայսմանէ, քանի՞  
եւս արդեօք հողեղենք: Զլացաւ զնա  
ժողովուրդն յանապատին որ աըր-  
ալնչեաց ի վերայ մանանային, մեք  
տացուք օրհնութիւն՝ զի ի մէջ շինի

կերակրեաց զմեզ: Ո՞ կարէ հատու-  
ցանել, եղբարք, ընդ արարածի և  
կազմածոյ մերում: Եւ հմէ այս եւս  
հատուցանիցին՝ ընդ խաչելութեանն  
ո՞ հատուցանիցի: Զի չեմք յազթող  
զօրութեան այսոցիկ, ոչ պահան-  
ջեաց ի մէնջ պահս խիստս, իբրու  
տայր զվաթմնապատիկս: Օրհնու-  
թիւն խնդրեաց ի մէնջ, որ դիւրին  
է բարձանց և խոնարհաց, արգարոց  
և մեղաւորաց, առողջոց և հիւան-  
դաց: Ի բանից ոչ յագի մարդ, և  
յօրհնութենէ ձանձրանսայ. գտրով  
խօսք ոչ հատանին, և յազօթմ՝ վհա-  
տութիւն է մեզ: Ո՞վ արգահատեացէ  
այնմիկ՝ որ արդելու զբերան իւր  
յօրհնութենէ: Խօսք մեր որ ընդ  
մարդկան են, յարգի եղեն մեզ քան  
զԱստուած: Տացուք փառս Աս-  
տուծոյ ընդ ամենայնի՝ զոր ես մեզ  
Աստուած: Զի ես մեզ արդեամբք  
խորտիկս, տացուք օրհնութիւն  
բարբառովք: Զի առանց վաստակոյ  
է արարչութիւն նորա, և առանց

աշխատութեան օրհնութիւն մեր: Ի  
ձեռն բանի հաստատեաց զմեզ, բա-  
նիւք հաստատեացուք զգովութիւնն:  
Զի մոդ արտանչէ և ուտէ, հեթանոսն  
ուտէ և ըմակէ. ընդ նոցա և ընդ  
մեր՝ հաստացուք օրհնութեամբ որ  
ելանէ ընդ բերան մեր: Զի Մար-  
կիոն զլացաւ զկերակիցն իւր, և  
Մանի զատեղծիչն իւր. եղեն ամուլք  
յօրհնութենէ: Զի Բարդէծան զլա-  
ցաւ զՀայր, և Հրեայք՝ զՈրդի օծեալ  
յանախեցէ ի բերան մեր գոհու-  
թիւն, և ելցէ ի սուրբ սրան մերմէ  
օրհնութիւն Հօր և Որդուց և Հոգ-  
ոյն Արք:

### ԿՅՈՒՐ Դ ԼԵ.

Ի ԳԱՂՅԵԱԾ, ՅԱՊԵՑԵԼՈՅ՝ Քեզ ՄՐՁԱՌԱ-  
ԹԻՒՆ, ՏԼՇ, ԿԵՐԱՎՐԻԶ

Տաց խրատ բարի՞ որ լսէ ինձ,  
զի ի բարի խրատու օգտեցուք ա-  
մենելան: Զի չէ հնար եթէ ոչ կե-

րեցուք, զի քաղցն բնակեալ է ի  
մեզ բնութեամբ. բայց եթէ երբ և  
քանի կերիցէ, չեն այսոքիկ բնու-  
թեամբ: Եթէ ոչ ոք արբցէ չէ հը-  
նար, և սահման այսմիկ չէ եպեալ.  
բայց եթէ զինչ և քանի արբցէ,  
կամաց են այսոքիկ երկոքեան: Ոչ  
զի մի ոք կերիցէ ասացի, այլ զի  
արժանի կերիցէ. և ոչ զգինի ար-  
գելում ես, այլ աղաչեմ զի չափով  
արբցէ: Ի նոյ արգար եթէ հայես-  
ցուք, իիթայ սիրա մեր ի գինուոյ.  
որ զծանրն առակեաց ի մեզ, զիարդ  
լուհոցէ: Այր ցածուն և արգար եր  
նա ի դարն շռայլեալ և անօրինեալ:  
Յաղթեաց հաղարաց գստերացն կա-  
յլնի, և ափով զինի՛ յաղթեաց նը-  
մա: Եղեւ ընդ երկար ընդ գստերմն  
կայենի, և բնակեաց զամ մի ընդ  
անհատւնս. և նա՝ որ յաղթեաց ի  
ներքս և արտաքս, պարտեցաւ ի գի-  
նոյ: Փոխեցան յանէծս ամենայն  
օրհնութիւնք իւր, զի անէծ զորդի  
իւր՝ և ոչ կամեցաւ, և արար զնա

ծառայ ծառայից ստուգութիւնն;  
 Անէծ բերան նորս զորդին կրտսեր  
 զոր սիրել նոս, զբամ, և զբանան  
 մանուկ, որ վշտացոյց զնա ի մեր  
 կումն իւր: Խոյեաց և խաչակ որ-  
 շափ վշտացաւ ի ժամու զի օրհնեաց  
 նոս զորդի իւր: և իբրեւ Յակովու-  
 էին օրհնութիւնքն, վշտիւ արդել  
 զնոսս է Սառայ: Յանիծանելն ըշ-  
 նոյի զբանան, ի սուգ մեծ էին  
 միաբ նորս. զի ոչ եթէ ցանմամբ  
 անիծանէր, այլ ստուգութիւնը հո-  
 տանէր: Ոչ եթէ յուժդին գինոյ  
 մերկացաւ ստոյգն և արդարն. զի  
 եթէ արբեալ էր յայպան՝ զնորա  
 զչետ երթայր պատուհանն: Ատու-  
 գութիւնն ոչ առ ակն երեսաց Քառ-  
 նանու, զիաջդ առնէր զնոյ գատա-  
 ւոր մեղացն զոր ինքն արար: Եթէ  
 գինուսին յաղթեալ էր նմո, մի հրա-  
 ման ելանէր ի վերայ այնը որ մեր-  
 կացաւն, և այնը՝ որ ոչն ծածկեաց:  
 Անէծ նովաւ զթշնամանիչն, և օրհ-  
 նեաց նովաւ զպատուիչն իւր: Ազ-

բիւր որոշմանց արար զնա չարու-  
 թեանց և բարութեանց: ի ժամու  
 օրհնութեան հանգուցեալ էր, և  
 արտամեալ՝ ի ժամ անիծից, և ինքն  
 Քամ վշտարար նմա՝ զի տարագիր  
 եղեւ յօրհնութեանցն: Գինի առա-  
 կեաց զցածութիւն ծանուն, զի արք  
 գինի և յաղթահարեաց զմիսս ծե-  
 րայն: Եւ եթէ նա՝ զի օրհնութեամբ  
 արք գինի սակաւ և չափով, և գար-  
 ձաւ յանէծս օրհնութիւնք իւր, և  
 խոստացաւ ազատաց ծառայութիւն,  
 քանի եւս երկիցէ տկարութիւն մեր  
 ի գինուս, զի գուցէ մեղցէ մեզ:  
 ի բժշկութիւն եւեթ արբցուք, զի  
 յայս իսկ տուեալ է գինի: Որ ցա-  
 ւեցան ըստ նմանութեան Տիմոթէի  
 այնպիսնեացն ետ զնա Առաքեալ,  
 բժշկել նովաւ զցաւս իւրեանց: Որ  
 ըմակ զնա վասն ցաւոց, գոհացի  
 զբարւոյն որ ետ զնա մեզ, և առողջ  
 որ վարինովաւ գոհութեամբ և չա-  
 փով արբցէ:

Օրհնութիւն Որդւոյ որ արար զնա

միմիթար ամենայն արտօմեցելոց, և  
գոհութիւն նմա՝ զի արար զնս դեղ  
գործանիչ ցաւոց մերոց:

### ԿՅՈՒՐԴ 1.2.

ՕՐՀԱՆԵԱԼ, ՏԵՐ ՈՐ ԿԵՐԱԿՐԻ ԶԱՄԵՆԱՅԱ  
ՄԱՐԴԻԿ

Ի ստկաւ հացէ լցոյց Եղիշայ ըդ-  
մարդարէմ՝ արս հարիւրու: Եւ ի  
հինգ նկանակէ՝ հազարս հինգ յա-  
գեցոյց Փրկիչն մեր: Մի նկանակն  
Եղիշայի՝ զասկաւս բաւեաց հեցու-  
ցանել. և մի նկանակն Տեառն մե-  
րոյ՝ հազար մի ողջ յագեցոյց: Մար-  
դարէք՝ կտառեկաւ կերակրեցան և  
մոլաթզով կեցին նոքա: Եւ զի լիու-  
թեամբ սեղան մեր, օրհութիւն լր-  
րիւ իւրով հանցուք: Մարդարէիցն՝  
ամենայն տառապանք, և մեզ՝ ամե-  
նայն իրախութիւնք: Զի նոքա զաս-  
կապանաց գոհանային, քանի՛ եւս  
գոհանացուք մեք որ գրդանամբս:

Մուրի ետ մարդարէիցն, և առա-  
քելոցն՝ զնոյն. իսկ մեզ՝ առաւել է  
կերակուր մեր: Քաղցեալ հացի էին  
առաքեալ քն, և մարդարէքն՝ ծարա-  
ւիք ջրոյ: Խորտիկք և գինի շեղչեալ  
են մեզ, գոհանցուք վասն երկո-  
ցունց: Առաքեալքն գրիչք Տեառն՝  
ի տառապանս իւրեանց գոհանային.  
իսկ մեզ, և մեջ ինչ պակասեաց, ծը-  
նանի քրթմին ջիւն ի բերանս մեր: Հա-  
լածական տանեին զգեւս ի մարդոյ,  
և նոքա յարաօրիեայն հասկ փիրէին:  
Առ հիւանդս առաքինութիւնք նո-  
ցա, և ի վայրի տառապանք իւրեանց:  
Ամենահասաթէն ընդ աշակերտոն  
իւր, և նոքա օրապահին կարօտեալք  
էին: Ի խաչահանուսն բնակեալ էր  
լիութիւն, և յաշակերտոն քաղցու-  
թիւն: Ետ զօրութիւն աշակերտացն  
հալածել զգեւս ի մարդկանէ. ըն-  
դարձակեաց զառողջութիւն նոցա, և  
նուազեցոյց զիսրաթիկս նոցա: Փչեաց  
հոգի յերեսս նոցա՝ զի խօսեցին  
յամենայն լեզուս, և ի ձեռն մարմնոյ

շրթանց՝ փչեցին զմուրկն և կերին։  
Հաց սպանաբագի կերան խաչահա-  
նուքն, և առաքեալքն և ոչ համար-  
ձակ։ Հաց ցանկութեան խաչահա-  
նուցն, և աշակերտացն հաց գալուոյ։  
Մարդարեքն յաւուրս Եղիսյի հաց  
կերան կշռով. և զի ընդարձակ է  
մեղ ամենայն ինչ, չափով կերիցուք  
զհամադամն նոցա։ Զուր ճշգիւլը  
պէին մարդարեքն զորս կերակրեացն  
Արգիս, իսկ մեզ՝ զի յաճախեաց  
գինիս, մի լիցուք արտաքրյ սրայ-  
մանի։ Մի գառեացի զքեզ եղբայր  
որ ընդ քեզ է, և մի գու գառեացես  
զանձն քո։ Եղիցի չափով ըմսկելի  
քո, և կշռով կերակուր քո։ Զիսոր-  
տիկ եթէ անարդեացես փոքր մի,  
բնակեցէ անձն քո ի պարարտու-  
թեան։ Եւ ի գինւոյ եթէ օտարաս-  
ցիս, հոգի քո առաւել եւս սրբեացի։  
Գոյն ցածուն պահողաց՝ խորտկօք  
մի փոխեացին։ Եւ գինով մի միսիթա-  
րեացի սիրա՞ որ վշտացեալ է յա-  
ղօթս։ Զի ոմն որիշ է հանապազ,

մեք դոնէ սրոշեացուք զայսօր։ Եւ  
զի եղբայր քո ընսւ ոչ ճաշակէ,  
դու դէթ կշռով կեր զամենայն։

### ԿՅՈՒՐԴ Լ. Ե.

ՕՐԾՆԵԱՄ. Է ՏԵՐ ՈՐ ԿԵՐԱԿԻ ՇՆՈՐՃԻ  
ԻՖՐՈՎ. ԶՀԱԽԱՏՈՅՑԵԱԼՈՒ

Եկին զուարթունքն առ Արբա-  
համ\* ... ի մօտոյ՝ և ոչ ի չեռուսա.  
ի մօտոյ . . . . . թեամեր։ Օրէնք ըը-  
նութեան Արբահամու, ոչ եթէ քու-  
նի հաւատացեալ էր, այլ եթէ քանի  
սիրէ զաղքասո ծառայակից իւր։  
իրբեւ քննեաց զհաւասո նորա, և  
եդ խոստումն սիրոյ նորա, թէ ի  
միւս անդամ՝ Սահակաւ ընկալցի  
զիսուառումն երկոցունց։ Ոչ եթէ ա-  
մենեւին հատոյց նմա. զի հասու-  
ցումն զոր հատոյց որդւով նորա՝  
նմանութիւն էր և նշմարանք հա-

\* Եւ աստ քսան տողիւ չափ պակասէ։

տուցմանն ճշմարտութեան։ Ոչ էր վաստակ ի մարմինս նոցա, և ոչ աշ-  
խատութիւն յանդամն նոցա, ոչ  
քուն յերեսս նոցա, և ոչ փոշի յոսա  
նոցա։ Ո ոք ժալրչեսցի ասել, թէ  
ի զուարթունս տիրեցին այսոքիկ,  
որք յական թօթափել իջին յերկիր  
ի բարձանց։ Խջանէ փայլակն եղառ-  
նայ, իբր յոցի տկար է նա քան  
զզուարթունս, ոչ տիրէ նմա աշ-  
խատութիւն, և ոչ կուի ի նմա փոշի։  
Ճնառաւ սիլբա նոցա, ոչ զի քալ-  
ցեալ էին, այլ վասն հանգստաւանն  
Աբբատամու։ Ետուն զոսս իւրեանց  
ի լուացումն՝ զի առաւել լիցի վարձն  
ըստ այնորիկ։ Փոխանակ զի լուաց  
զոսս զուարթմոնց՝ անցին ընդ ծով  
ոսք զաւակի իւրօյ. և չե չնջեաց  
զոսս նոցա դաստառակաւ՝ զդեցան  
զհանդերձս Եգիպտասի։ Սփուեաց  
ամպ ի վերադ ծննդոց նորա, փո-  
խանակ հովանուոյ կաղնւոյն։ Եւ զի  
արկ անկողին ի ներքոյ նոցա՝ ետ  
զաւակի նոցա զպաստառակս Եգիպ-

տոսի։ Ամենահատուցիչն հատոյց  
Աբբատամու, ոչ միայն որչափ արար  
նա, զի զորդիս նորա զգեցոյց նա և  
ոչ մաշեցան հանգերձնոցա։ Հատոյց  
մանսնայ փոխանակ բաղարջին, և  
լորամարդ՝ փոխանակ որթուն։ Եւ  
զի կերակրեաց զուարթունս հլուս,  
հատոյց զլացող որդւոց նորա։ Ենիքձ  
դարձեալ զիկմ, և ետ գետու տան և  
երկուս, զի արբուուցէ զանթիւազգն,  
փոխանակ ջրցն զոր ետ երիցն։

Ծնթերցարուք, քանզի հատու-  
ցանէ Տէր մեր առնելեաց զատուրա  
ողորմութեան՝ ի կեանս և ի մահս իւ-  
րեանց, և ծննդոց որ գան զկնի նոցա։  
Ակնարկեաց և աճեցոյց զամլու-  
թիւն, և բաղմացոյց Ասհակաւ զզա-  
ւակս նորա իւրեւ զաւազ ծովու որ  
առանց թուոյ։

Օրհնեալ որ հատոյց Աբբատամու  
յառաջ քան զմահ և յետ մահու  
նորա, իւրեւ կայ եւս հատուցումն  
իւր և զկնի յարութեան իւրց։ Օրհ-  
նութիւն Որդւոյ՝ որ զամենայն ինչ  
հատուցանէ որդւոց իւրոց։

ԿՅՈՒՐԴ 1. Ը.

ՕՐՀԱՆՈՒ, ՈՐ ԿԵՐԱԿՈՒՐԻ ԶԱՄԵՆԱՅՆ ՇՈՒՆՉ  
ԻՐԻ ԶՀԱԶԱՐԱՆ ՅԱԿԱՊԱՏԻՆ

Ժաղովկեցան յամենայն ազգաց յա-  
նապատն առ Փրկիչն մեր: Են ի  
նոսա ախտաժէտք, և հասածք, և  
կոյրք, և խուլք, և բորսոք: Յա-  
ւուրն առաջնում ակն ունէին, թէ  
ի նմա բժշկէ զցաւս նոցա: Անց  
պարզեցաւ օրն առաջն՝ և կայր ժո-  
ղովուրդն յարասա իւր: Յաւուրն  
երկրորդի ակն ունէին՝ թէ ի նմա  
բժշկէ և արձակէ զնոսա: Կատա-  
րեցաւ օրն երկրորդ՝ և ոչ արձա-  
կեաց, զի չէին բժշկեալք: Ժուժե-  
ցին կոյրքն և բորսոքն, և որ ունէին  
զգեւսն, և կացին մնացին: Եւ իբրեւ  
փակեալ եր ընդգէմ ամենեցունց՝  
ոչ ոք փոխեցաւ առ ի նմանէ: Զի թէ  
բժշկեալ եր զսակաւմ՝ արդելուին  
սակաւքն զբազումն: Եւթնիցս յա-

ւուր մերձեցան առ նա ցաւածքն՝ և  
ոչ բժշկեաց զնոսա: Յաւուրն ա-  
ռաջնում և երկրորդի սերմանեաց ի  
նոսա վարդապետութիւն. զի իբրեւ  
բժշկեաց զմիսս նոցա՝ ողջացուացէ  
և զմարմինս նոցա: Եւ օրէն իսկ  
եր, զի յառաջագոյն տացէ զմեծ  
բժշկութիւնն, զի մեծ է հոգի  
քան զմարմինն: Ի բժշկութեան ոգոց  
վաստակոց, պաշար որ եկն ընդ  
մարդկանն՝ սպառեցաւ յաւուրն  
երկուս: Արկնեցաւ վիշտ ի սպառել  
հացին, և կային տակաւին արատք  
նոցա: Երկունք մահու կալաւ զնո-  
սա. և թէ մնայցին՝ ոչ բժշկին, և  
դառնալ յօթեւանս իւրեանց՝ չոյր  
զօրութիւն յոսս նոցա: Տեւեցին  
յօրն երրորդ, յայս ապաստան՝ թէ  
բժշկին: Անցին ժամք մետասան, և  
զոք ի նոցանէ ոչ բժշկեաց: Ունէին  
կանայք զսիրելիս իւրեանց, և զան-  
դամալոյցն հանգերձ կազիւք: Մի  
կին տանէր զեղեայր իւր գօս, և  
միւսն ձգէր զչայր իւր կոյր: Արեւ-

գակն ի մտանել մերձեալ էր, և  
կային ամենելին յաշտիձան մա-  
հու: Կրկնեցաւ վիշտ հիւանդաց նո-  
ցա, և յաղդովեաց սով զառողջո  
նոցա: Յամփոփել արեգական զնա-  
ռապայթու իւր՝ վայ կոչէին անձանց  
իւրեանց: Զի հիւանդքն ի ցաւս  
կաշկանդեալ էին, և առողջքն քաղ-  
ցիւ կապեալ էին: Ի ժողովել արե-  
գական զծայրա իւր՝ ծագեցին նոցա  
ողորմութիւնք: Զի ևս զբժշկու-  
թիւն զոր ինդրեցին, հանդերձ յադ-  
մամբն զոր ոչ ինդրեցին: Յետ  
առնլոյ զհանգէս նոցա զՃշմարտից  
այն և զիենդաւորաց, սփակաց ըզ-  
դութ իւր զամենայնիւ: Զի զրիե-  
ցողօքն և հաստցաննողօքն՝ յաշա-  
կերտայն ուսանելը որ ինչ յայտ էր  
խորհրդոց նորա: Վկայո կամեցաւ  
առնել զնոսա հացին որ պակասիաց  
ի ժողովրդենէն: Տէր որ դիմէր,  
թէ զոր սքանչելիս հանդերձեալ էր  
կատարել, անդ ակնարկեալ նորա՝  
յաճախեաց զհացն: Ոչ հրամայեաց

մնալ առաջնոյն, այլ ած զկնի և  
զայլսն:

Լոյն մեր էհարց զառաքեալսն՝  
թէ քանի՞նկանակս ունիք առ ձեզ.  
զի յայտնեցէ թէ պակասիաց հաց  
յաղքասաց և ի մեծատանց: Բզ-  
լիութիւնն ետ նախ արդեօք, եթէ  
զառողջութիւնն յառաջ քան ըզ-  
լիութիւնն: Զբժշկութիւնն ետ յա-  
ռաջագոյն, եթէ ուրախ արար նախ  
զհիւանդու ի յագմանն: Բազմեցան  
յանկարծակի ի վերայ խոտայ, քա-  
չանայք սուրբք՝ ընդ բորսան, որք  
ի նմին ժամու առին զսրբութիւն:  
Բացեալ էին աչք կուրաց՝ և հայէին  
ի ծաղիկս և ի խոտա: Ողջք ընդ  
կոյրս պշուցեալ էին, և նոքա ընդ  
գեղ արարածոցս: Նստէլ անդրա-  
նիկ առ մօր իւրում անդամալոյծ,  
իւրեւ ձեակեալ էր լնուլ զորովայնն՝  
և ցուցանել զընթացս սաից իւրոց  
զոր սասացաւ: Յարեան և մեկնեցան ի  
Ծեառնէ ժողովք ժողովք ի քաղաքու  
իւրեանց, և որք պէսպէս ցաւօք եկին

առ նա՝ մեկնեցան ի նմանէ առողջութեամբը։ Ալծ զարմանք և զեկն անդ, զի մի յագումն ետ ամենեցուն։ Կտպաշար ամենայնի և առողջութիւն ամենեցունց։ Եթող կոյր զառաջնորդ իւր, և անդամալոյծ՝ զայն որ կրէր զնա։ Կաղք՝ ընկեցին զցուպս իւրեանց յառողջութեան՝ զոր սաացան ոսկը նոցա։

Օրհնութիւն այնմ՝ որ յագեցոյց և բժշկեաց զժողովն յանապատի, զի ըստ նմին օրինակի բժշկէ և կերակրէ զամենայն մարդիկ որ ընդ տիւզերս։

### ԿՅՈՒՐԴ ԼԹ.

ՕՐՀԵԿԱԱ, ՈՐ ԿԵՐԱԿՐԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ  
ԻՒՐՈՎ, ԶԱՇԽԱՌՀՅ՝ ԶՈՐ ՀԱՍՏԱՏԵԱՅ  
ԳԹՈՒԹԵԱՄԲ

Յաւուր յորում կենդանացաւ Տէր  
մեր Քրիստոս, և լուծաւ գոլումն  
աշակերտացն, ասէ Շմաւոն յառաւ-

քեալսն, Էթէ Երթայց որսացից  
ձուկեր։ Յարեան ընկերքն՝ գնացին  
ընդ նմա, իբրեւ յորս և ի զրօս  
սանս, զի թափեացին ի արամութենէ  
և բերցէն զօրասպահի աւուրն։ Զգիւ  
չերն ամենայն աշխատեցան՝ և յուռա  
կանն ոչ հմուտ ձուկն։ Զի արամեա  
ցոյց զնոսա ծովն Տէր ծովուն ուրախ  
արար զնոսա։ Ի ժամու իբրեւ իսաւ  
փանեցաւ որսն՝ պատահեաց նոցա  
որս յոյժ։ Իբրեւ լքան ձեռք նոցա՝  
զտին նոքա որս, և զիլորդի։ Եւ թէ  
մինչ ընդ նոսայն էր Փրկիչն մեր,  
և բժշկէր զամենայն ցաւս, կարօս  
տեալք էին ի հաց, և հասկ ի քաղցի  
փիրեցին և կերան, այսօր զիարդ  
ոչ՝ որք միայն մնացին ի նմանէ և  
ի զօրութեանց նորա։ Զի մինչ ընդ  
նոսայն էր՝ քաղցնուին, քանի՛ եւս  
քաղցնուն առանց նորա։ Զի առանց  
որսոյ և առանց հացիէին նոքայանմ  
աւուր, և ետ Տէր մեր զերկոսին՝  
կարօտելոցն յերկոցունց։ Եւ յաւել  
Տէրն էրկոցունց՝ զառաւելն քան

զերկոսին. զի զՈրդին Տեառն ամեւնայնի գտին անդ: Նմանեցոյց զանձն դոյզն ումեք, զի խնդրեսցէ զհաց ի քաղցելոցն, ուտել ինչ ասէ կերակրիչն ամենայնի: Եւ զի յայսմանէ ոչ ծանեան զնա, և ետես զնոսա զի արամեալ էին, և ասէ, թէ՝ Յաջմէնաւիդ ընկեցէք՝ և ահա գտանէք: Ընկեցին զուռկանն, և գտին որս յոյժ: Ընդ որացն՝ խորհել սկան, թէ ովէ է այն՝ որ իբրև ի ցամաքի է, ետես ձկունս ի մէջ ծովուն ժողովալ. զի ժողովէին ընդ աջմէ նաւին: Եթէ ետես զնոսա՝ զարմացումն և եթէ նա ժողովեաց զնոսա, ովէ է նա որում լուան ձկունքն: Կարծել թէ Որդին իցէ, ոչ նման էր բարբառով և ոչ աեւլեամբ: Եւ եթէ չէ նա՝ ովէ իցէ, զի ընդ բանի նորս եղէն արդիւնքն: Մանեաւ զնա Յովհաննես և ասէ ցՅաւուն՝ թէ Տէր է այն: Զգեցին զգործին լցեալ, և այսր և անդր հայէին յորս ծովուն: Հայէշան յՈրդի ի ցամաքն, և դոյզն ինչ

էր ուրախութիւն ձկանցն որ ի Փրկիչն մեր: Զի բազմացաւ որս քաղցելոցն, և չէ մարթ թէ պատմեսցի ուրախութիւննոցա որի Փըրկիչն մեր: Ոչ կալաւ զյժ Յաւուն մինչեւ ձգիցէ զուռկանն ի ցամոք: Լօզայր, գայր և ածէր զմբաւաւ, նա՞ արդեօք իցէ, թէ ոչ իցէ նա: Ոչ ասաց, թէ գու ես Տէր, հրամայեա ինձ գալ առ քեզ. զի երկեաւ նա՝ թէ գուցէ փորձութիւն պատահեսցէ նմա իբրեւ զառաջինն: Կտաւ ած ընդ մէջ զգեստ՝ մինչ ի ջուր անդր էր: Եւ իբրեւ ել նա՝ զիարդ արդեօք մերձեցաւ առ Տէր եւր. Երկիւղիւ մեծաւ՝ իբրեւ զԱմլորդին, եթէ միամտութեամբ որպէս Մարիամ: Ի բերան ետ արդեօք ողջոյն, թէ առ սամն անկաւ և եպադ երկիր: Ասաց ինչ արդեօք յայնժամ Յաւուն, թէ լուռութիւն պատահեաց ի ժամուն: Ալաչեաց վասն ուրանալոյն զնա, թէ չէր ժամ աղաչելոց զնա: Եհարց զնա Յաւուն զի պատ-

մեսցէ վասն մահուն և յարութեան  
իւրոյ, թէ գողումն կալաւ զնա՝ իւր-  
բեւ ետես ոչ ի կերպարանս իւր:  
Ելին աշակերտքն և տեսին հաց և  
կայծակունս և ձուկն ի վերայ նու-  
րա: Զարմացան ընդ չորս նշաննն  
զորս եցցյ նոցա ի միում ժամու:  
Ելին նշան ծովուն գուզնաքեաց էր,  
զի ժողովելով ժողովեաց զձուկնն,  
ցամաքին մեծ էր, զի հաստատեաց  
զհացն և զձուկնն և զկայծակուննն:  
ի ծովէ անտի էր ձուկն այն, եթէ  
մեծ ծովու էր արդեօք: Հաց յաշ-  
խարչէս էր, թէ հաց նոր էր: Զուկն  
էր արդեօք զոր ծնաւ ցամաք, և հաց  
զոր բղիսեաց օգ, կամ թէ չէին յայու-  
ցանէ, զի յոչընչէ էին նոքա: Այն  
որ բազմացցյ հաց ժողովրդեանն,  
նա հաստատեաց աշակերտացն: Որհ-  
նեաց զձկուննն յանապատին, հաս-  
տատեաց հուր ի ծովէղերին: Եւ զի  
ոչ հաւասացին անուսմունքն, թէ  
հաստատեալ է հուր յամենայն իմիք,  
եկեցն անցեն զի հաստատեալ է  
ընդ փայտի ի Փրկչէն մերմէ:

## Կ Յ Ո Ւ Ր Դ Ի Խ.

ՕՌՃՆԵԱԼ, ՈՐ ԵԿԵԲ ԲՆԴ ԱՇԱԿԵՐՏԱՆ,  
ԶԵ ՅՈՒՅՑԵ ԹԷ ՄԱՐՄԻՆ ԶԳԵՑԱԱ

Զի ետես Տէր զաշակերտսն իւր  
թէ աշխատեալք և քաղցրեալք էին,  
պատրաստեաց Տէրն ծառայից իւրոց  
Տաշ: Մինչչեւ եկեալ նոցա՝ էլին  
դաին առաջի նորա հաց և ձուկն  
արկեալ զկայծակամքք: Ասէ ցնոսա.  
Եկայք ճաշեցէք՝ զի օր է Պէնստա-  
կոստէից: Այսր անգր եղեն միաք  
նոցա, թէ ուստի է հացս այս և  
ձուկնն: Զի յանապատին՝ աճէլով  
աճեաց, և աստ՝ հաստատելով հաս-  
տատեցաւ: Զի յանապատի անդ՝  
յընչէ եղեն, և աստ յոչընչէ հաս-  
տատեցան: Զի յաճախեցուցաննէլ  
տեսին զնա, ոչ տեսին իբրեւ հաս-  
տէրն: Ի ձկանէդ որ որսացայք՝ իսո-  
րովիցէք, ասաց Տէր ցաշակերտսն  
իւր: Ոչ նոքա որսացան զձուկնն,

այլ գուշ հրամացեցիր որսալ զնոսա:  
 Նոցա էր թերեւո՛ թեմէ ըմբռնեալ  
 էր յայնմ գիշերի յորում ոչ ինչ  
 գտնին. և զի յետ բանի քո ըմբռու-  
 նեցին, յարութիւն քո հաւատա-  
 ցաւ նովաւ: Ընդէ՛ր ընդ միոյ ձկան  
 ոչ հաստատեաց ձկունս բազումն.  
 զի հանգերձեալ էր նա տալ զորսն՝  
 ոչ յաճախեաց հաստատել ձկունս  
 յոյժ: Մի ձկամբն զոր հաստատեաց՝  
 եցոյց զհաստըութիւն իւր, և դար-  
 ձեալ զի ոչն յաճախեաց հաստա-  
 տեաց, եցոյց զկանիսութիւն գիտու-  
 թեան իւրոյ. զի գիտէր թէ Երկնչին  
 ի նմանէ գտն այլանման կերպաւ-  
 րանաց իւրոց: Ոչ յաճախեաց, հաս-  
 տեաց զի գուցէ զարհուրեցուացէ  
 զնոսա հաստըութիւն իւր: Իրբեւ  
 հերձին, և լուացին և խորովեցին՝  
 հաղորդեցին ընդ նմա հացիւն: Զի  
 հասոյց նոցա մինչչեւ եկեալ էին,  
 հասուցին նոքա յետ գուցյն: Զոր  
 ինչ խոստացաւ նա ի վախճանի տու-  
 նել երկոտասանիցն, կանիւեաց արար

նա զայն աստ, զի այն ընդ այն  
 երաշխաւորեացի: Զի խոստացաւ նա  
 ուտել իւր առ սեղան արքայութեան.  
 և զոր չէր խոստացեալ արար, զի  
 առաւել ստուգեացի խոստացեալն:  
 Եկայք ձաշեցէք ասէր Աստուած  
 յակնորսան: Բաղմէին քաղցեալքն՝  
 և ի մէջնոցա կերակրիչն քաղցելոց  
 բազմեալ: Արոբէք զարհուրէին ի  
 նմանէ, և գունդք Գաբրիէլեան սոս-  
 կացեալ. և որդիք հողոյ բազմեալ  
 ընդ նմա նախ քան զօրն: Զի բազմին  
 ընդ նմա՝ թէ հարցանիցին վասն հա-  
 ցին, և վասն հրոյն, և վասն ձը-  
 կանն: Գիտէին՝ թէ որ բանգտանեաց  
 զձկունսն որ ցրուեալ էին ի մէջ ծո-  
 վուն, զի ժողովեացի բազմութիւնն  
 ի մէջ փոքր գոգոյ ուռկանին, նա  
 հրամացեաց հացի և հրոյ և ձկանն՝  
 և եղին յանկարծ: Զի եցոյց նո-  
 ցա զԱստուածութիւն իւր որսովն  
 այն\* :....

\* «Երեւի չորս թուղթ ուականել աստ»:

Զի՞՞ հուրն և հացն և ձուկն, աչա  
վկայեն Երեքին զերրորդութեան  
Աստուածութենէն:

Ուտէին ընդ նմա, և հայէին թէ  
ուտէ կամ չուտէ: Եթէ կարօտէր  
նա հացի, ոչ կարէր նա հաստել  
հաց: Եկեր ընդ նոսա՝ զի գուշա-  
կեսցէ թէ արդարեւ մարմին զգե-  
ցաւ: Եցոյց նոցա զսպիսն, զի ծա-  
նուսցէ, թէ նոյն ինքն կենդանացաւ:  
Եւ թէ իբրեւ զայսոսիկ արար՝ կա-  
մեցան սոտել զյարութիւն նորա,  
և թէ անփոյթ արարեալ էր՝ քանի  
եւս սուտ առնէին: Երջեալ զհացն  
և զձուկն առաջի նոցա, և ոչ հաս-  
տեաց ջուրս: զի գիտէին՝ զի որ ոք  
ծարաւէր, երթայր ըմպէր ի ծովին  
և գայր բազմէր: Եւ ոչ գինի հաս-  
տեաց՝ իբրեւ կարէր, զի ուսուսցէ  
մեղ աշակերտելոցս, զի եթէ պիտոյ  
ինչ էր գինի տայր զնա սոտպէլոցն:

\* Առափ ցվախճան կցրդիս՝ ի Գ. հա-  
պինտեն բովանդակեցաւ մերժէ:

Նա՝ և ասաց իսկ, եթէ Ոչ արբեց  
միւսանգամ ի ծննդենէ որթոյ: Զար-  
մանք Են այս. և յոյժ ժապէնցի  
սպատմել զսմանէ յայտնապէս: Զի  
հաստեաց գինի ի հանդիսաւ մեր, և  
մի ցատուցուք նովաւ զԱստուած:  
Արբցուք չափով գինի զոր ճաշա-  
կեցին եղբարք մեր: Զի է որ ոչ ճա-  
շակեաց զնա, և է որ սակաւ: Զի  
գուցէ լկուցուցէ զաւելի ըմպողն:

Պոհութիւն այնմ որ օգնեսցէ տը-  
կարութեանն մերում, և ոչ այ վա-  
տել զի մի արանջեսցուք:

### ԿՅՈՒՐ Դ ԽԲ.

Ե ՔԱՂՅԵԼՈՅ ԵՒ Ի ԿՐՈՒԹԵՆԿ ՄԵՐՄԵԿ,  
ՔԵԶ ՕՐՃԱՌՈՒԹԻՒՆ, ՏԵՐ ԲԱՐԵԲԱՐ

Զհարուածոցն որ Էղեն յԵգիսպ-  
տոս, և զծովէն որ բաժանեցաւ, և  
զսմացյն և զսեան հրոյն լուան ազդք-  
յամենայն կողմանս: Դիզրդեցան եկին  
յամենայն կողմանց՝ ահսանել ըզ-

վառս Մոլսեսի, և զմանանայն, և զվէմն որ բզիւէր երկոտասան գետո: Խորչէլ, թէ ոչ, ոչ լուան ազդքն զհշանացն՝ չէր հնար. զի դքառասուն ամ կացին մնացին: Ելին ընդ տիեզերս համբաւք նոյա որք գործեցան յանապատին, և ընդերկարեցան վասն երկուց իրաց. զի ժողովուրդն փափկացի նոքօք և աշակերտեցի նորովք: Եւ ոք էր որ համբերէր երբեւ լուան զարուհսան զայնս, առ ի յոչ երթալ և աեսանել թէ ըստ լսելոյն իցեն և արդիւնքն: Խաղացին եկին աեսին զամենայն, զի սփուեալ էր ընդ բնաւ անապատն. և զի աեսին զնոր մանանայն ևսուն նոքա օրհութիւն նոր: Տեսին ըզսիւնն զի պաշտէր՝ և չէր կարօտ ջամբայ իւրոյ: Օտար էր ի չերմութենէ, զի լոյս տայր և ոչ այրէր ի նշուլէն: Վէմն ուստի ջուրն բըզիւէր՝ աեսլւամբ իւրով անարդ և դառձ, և բղիսին բխմունք իւր:

Յիսուս որ յորթորթէցաւ վէմ, նը-

կարեցաւ յօրինեակն ի մէջ վիմին, թէ երկոտասան առաքելովք արբուցանէ գեղ կենաց ամենայն տիեզեւոց: Ամենայն ազդք որ տեսին և գարձան՝ առին մանանայ, զի եղիւցին աեսիլև երաշխաւորայլոց իրաց՝ որոց չէ հնար թէ բառնայցեն: Ոչ նեխցաւ ի հեթանոս որպէս ինձ թուի, որպէս նեխցաւն առ նոսա: Զի որպէս պահեալ էր ի սափորն՝ պահեալ էր յազդան յորս առին: Ոչ մնայլ նա յազդան ժողովրդեանն՝ զի ամաչեցուցէ զնոսա ի քաղելն: Խսկ յազդան զի պահեցաւ, քանզի ի փառս առին զնաւ: Ուստի դայր մանանայն. ուսմունք մոլարք. յու չընչէ իջանէր՝ թէ յընչէ արդեօք լինէր: Արդեօք յօդայ իջանէր. և յօդս ուստի է մանանայն: ի հաստատութենէն արդեօք էր, թէ յամպոյն որ հովանի ունէր: Ո՞ կարէ հասու լինէլ այտմիկ, թէ ուստի իջանէր մանանայն: Յոչընչէ իջանէր նա, ոչ ի համբարէ: Հանդեաւ-

ժողովուրդն յաղիւսոյ և ի սերմանեւ-  
լոյ և ի հնձելցյ: Խափանեցան արքն  
յամենայն գործոց, և կանայք նոցա  
յամենայն ոստայնից: Վնաս մեծ աե-  
սին նոքա չանդսաւեամբն զոր գախն:  
Նեխեցաւ մանանայն յամանս նոցա՝  
զի եղիցի նոցա գործ առ վաղիւ. և  
ասկաւ ի չափս նոցա՝ զի օտարաս-  
ցին ի գատարկութենէ: Որթ քանդա-  
կեաց գատարկութենն՝ և կրկնեաց  
զնոսա ի գործ: Զի ի քաղել մանա-  
նային և յաջալ և յեփել՝ ծախեացի  
օրն ամբողջ: Սահեր ժողովուրդն  
ընդ անսպասն, ոչ քաղել զյարդն  
Եղիպատոսի՝ այլ ժողովել զմանա-  
նայն, և զշելզս շեղջս լորամարդին:  
Մեղրապոպ ընտրեցին ընդ մանա-  
նային, և սոխ խստոր ընդ լորա-  
մարդոյն: ԶՄովսէս ընդ կորիսայ  
փոխանակեցին, և զԱստուած՝ ընդ  
քանդակեալ որթուն: ՅԵղիպատոս  
նեղութիւնք նոցա, և յանսպատին  
չանդիսաք նոցա: Եւ եթէ գատար-  
կութիւն ապականեաց զնոսա՝ վաս-

տակելուին ընդէ՞ր ոչ օգտեցան: Ծն-  
թելցիր, զի ի ժամու աշխատու-  
թեան առաջի որթուցն կորանային, և  
ի ժամու գատարկութեան իւրեանց՝  
զորթմն առաջինս նորոգեցին: Ծղ-  
բիւրս կապանաց իւրեւ ստկաւ ինչ  
խորտակեաց, և փրկութեամբն յա-  
նապատին յորում ազատեցան՝ նո-  
րոգեցան ի սովորութիւնս իւրեանց:  
Թողին զկուռան Եգիպատոսի և յա-  
րեցան ի տունն Մովսէսի. և իւրեւ  
չիքն որ նեկեր ի կուպաշաելն, ին-  
քեանք իւրեանց նորոգեցին որթ:

Օրհնութիւն Տեառն Աբրահամու,  
որ չասաց Աբրահամու յորդիս իւր.  
և իւրեւ զլացողք եղեն՝ ոչ փո-  
խեաց զիստումն իւր որ առ ծա-  
ռայս իւր:

ԿՅՈՒՐԳԻ ԽԳ.

ՔԵԶ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՅԱՄԵՆԱԱՅՆ ԿՈԴՐԱՅՑ  
ՀՈՐ ԿԵՐԱԽՐԵՍ ՀԱՅԱՊԱՅԱ ՇԱՅՈՇՅՈՔ ՔՈՎԵ

Աւուրս քառասուն սպահեաց Մովկ-  
սէս երկիցս անդամ՝ և ոչ քաղցեաւ։  
Պահեաց և Տէր աւուրս քառասուն,  
և քաղցեաւ՝ որպէս դրեալ է։ Ո՞  
հաւատացէ վասն Մովսէսի, թէ ոչ  
քաղցեաւ, որ զի և Որդի քաղց-  
եաւ։ Զիա՞րդ քաղցեաւ Տէրն Մով-  
սէսի։ Որդի մարմին զգեցաւ, Մովսէս  
Աստուած անուանեցաւ։ Քաղցեաւ  
անդրանիկն՝ զիձանուացէ թէ մարմին  
զգեցաւ։ Եւ Մովսէս փառաւորեցաւ,  
զի յարեցին փառք արդարութեամբ  
իմեծատուն Աստուածու թէանն զոր  
զգեցաւ շնորհօք։ Ոչ քաղցեաւ Մով-  
սէս շնորհաւն, զի վերացոյց զնա  
անունն ի քաղցոյց։ Շնորհօք քաղ-  
ցեաւ անդրանիկն՝ զի էջնա մարմինը  
ի քաղցն։ Զծառացն վերացոյց և

բարձրացոյց անուն Տեառն իւրց՝  
որով կոչեցաւն, և զՈրդի ած ի խո-  
նարհութիւն մարմին մեր զոր զգե-  
ցաւն։ Ոչ միայն վասն մարմինյն եկի  
Քրիստոս ի քաղցութիւն, այլ և  
պատերազմ պաշանչէր, զի մոցէ  
կացէ քաղց ի միջի։ Քաղցիւ խա-  
բեաց նա զասանայ, զի կարծե-  
ցուացէ թէ մարդ է, քանզի երկնչէր  
մարտնչէլ ընդ նմա՝ թէ ոչ է տե-  
սեալ զի քաղցեաւ։ Զի սուտ արար  
չարն զմարդարէմն որ գուշակեցին  
զգալց նորա։ և զՓաբրիէլ և զըն-  
կերս իւր՝ որ քարոզէցին զյանալն  
և զծնունդ նորա։ Եւ զի սուեաց  
զՀայրն որ ի վերայ գենացն աղա-  
զակեաց, թէ Դա է Որդի իմ սի-  
րելի։ Նենդեաց զնա Որդի քաղցին՝  
որ առ ժամանակ մի տիրեաց նմա։  
Զի թէ չէր սուտ արարեալ սասա-  
նայի զմարդարէս և զչորէշտակս,  
եթէ չէր դրեալ զՀօրէ՝ զի աղա-  
զակեաց, թէ Դա է Որդի իմ, ոչ ինչ  
եմ ընդ այսր բարբառոյ։ Յէլանելն

նորա ի փորձել՝ զքարթնան ի հաց  
դասնալ պահանջեր ի ձևաց նորա:  
Արդ զի առաւել եղեւ այսուիկ Սով-  
ուէն՝ որ ոչ քաղցեաւ իբրեւ զԱն-  
դրանիին: Ո՛ ժողովուրդ, Եկ աես  
զՈրդի իբրեւ արար սքանչելիս յա-  
նապատճն: Երկիր ես զամենայն ինչ  
ի կերակուր Որդւցն ամենակերա-  
կրի: Երկինք առաքեցին զբնակիչս  
իւրեանց ի սպաս Որդւց ամենա-  
աեւանն, այն՝ որ հասաստեաց խոր-  
տիկսքաղցելոցն: Տիրեացնմաքաղցն  
ի կամս իւր, և զայն՝ որոց հրեշ-  
տակըն ոչ քաղցնուն, պատրաստե-  
ցին առաջին նորա: Միտին քարոզե-  
ցին զմարդկութիւն նորա, և միւսովն  
եւս՝ զԱսառուածութիւն նորա: Զի  
քաղցն իւր ազաղակեր թէ մարդ է.  
զուարթունք ապաղակին թէ Աս-  
տուած է: Եւ թէ քաղցն իւր առ  
չարն այն, և ծարաւն իւր առ կինն  
Յամըրտացի, վաստակ իւր առ ջըր-  
հորին, և ի նաւին՝ քուն ճաշակեաց:  
Եւ թէ այսուիկ ոչ հաւատացին ան-

ուսմունքն թէ առ նա զմարմինն,  
առանց այսոսիկ քանի եւս սոււա առ-  
նէին զմարդկութիւն նորա: Խրեւ  
քաղց և ծարաւ և մա՞ ապաղակեր  
զմարդկութիւն նորա, և սքանչե-  
լիք զօրութեանց վկայէին զԱսառու-  
ածութիւն նորա: Զլացան ոմանք  
յանուսմանց զմարդկութիւն նորա,  
և ոմանք մարմին եղին զնա. արիա-  
նոսք՝ գործ ասացին զնա:

Եկայք ինդրեսցուք զայն կերա-  
կուր թէ զի՞նչ է, և ուստի է զոր  
Երկրորդի Արարչին մերոյ յաւուրն  
զի ելոյծ զպահս իւր՝ մասուցաւ:  
Կերակուր հոգեւոր է թէ մարմնաւ-  
որ արդեօք: Երկրաւոր է արդեօք՝  
թէ Երկեաւոր: Զի Եթէ հոգեւոր էր՝  
ոչ գային հրեշտակք. զի կերակուր  
հոգեւոր՝ ոչ է կարօտ պաշտօնէից:  
Եկեր Մովսէս փառս ի լերինն, և  
լուսաւորեցան Երեսք նորա: Արք  
փառս՝ և պարարեցաւ, և ոչ եղեւ  
կարօտ պաշտօնէից: Եւ Անդրան-  
կանն թէ փառս կերեալ էր՝ փառա-

ւորէր, և հրեշտակը ի սպաս պաշտաման գալ առ նա չէին պիտոյ: Եւ եթէ զիերակուր մարմնաւորաց եկեր մարմինն զոր զգեցաւ, զի՞նչ էր, և ուստի՝ պատրաստեցաւ նմայակապանն: Իսկ եւ իսկ իբրեւ կատարեցաւ քառասնօրեայ փորձութիւնն նորա, գրէ՛ թէ Եկին հրեշտակըն առ Յիսուս՝ և պաշտէին զնա, քանի՛ էր թիւ աշտկերտ\* ...

### ԿՅՈՒՐ Դ Խ Գ.

... տայցեմք ի պատիւ զանձինս մեր, և ոչ նախանձիցեմք նմանողք լինել սոցա՝ որք պատաւենն զմեզ: Քանզի ցանկամք մեք պատուի՛ պատուել զայլս ճեպեսցուք: Իսկ եթէ զպատուիրեալն արհամարհեմք: զոր ոչ է պատուիրեալ՝ զիստդ արաւցուք: Փախիցուք, Եղբարք, ի պա-

\* «Եւ առա կարծի պակասել չորից թղթոց»: Մնիժ. մերոյս օրինակին:

առւց, ոչ զի խափանեսցի պատուիւրանն: Քանզի յորժամ՝ պատուել ամենայն ոք զընկեր իւր, յայնժամ Ճշգրտեալ ի գլուխ գայ պատուիւրանն: Կամեաց պատուել զելքայը քո, իսկ եթէ նա իբրեւ զքեզ հրաժարէ, պատուելով պատուիք ի միւմեանց ըստ պատուիրաննին: Մատիր և պատուեա զկրտսելն, եբրեւ Տէր մեր զաշակերտան իւր: Արա յոյժ կրասերոյն քում, և անդրէն զշափն առցես զպատուոյն: Եթէ լուսացուք զոսա միմենանց՝ փոխարէնս հատուցուք, և եթէ լուսացուք զոսա հիւանդայ՝ առ Տէր մեր արկաք փոխարէնս: Բարիոք է առնուլ պատիւ, եւս առաւել լաւ է պատուել զայլս: Մեկին վարձք է պատուառին վարձն, և կրկին այնմ որ պատուէն:

Որ չնութիւն Որդոյն, որ ուսոյց զի առնելով արասցուք միմեանց, իբրու ակնարկէ եւս Շմաւոնիւ՝ զի երկից մարդ ի պատույ:

## ԿՅՈՒՐԴ ԽԵ.

ՕՌՀԱԵԱԼ, ՈՐԻՆ ՏԵՍԱԲՆ ԱՄՄԵՆԱՅՆԻ, ԶԵ-  
ՆԱ կ ՈՐ ԿԵՐԱԿՐԻ ԶԱՄՄԵՆԱՅՆԱ

Ընդ Արբահամ նայեցարուք և  
Նմանեցէք՝ զի օսարաց երկիր պա-  
տառէր: Զի նա ընտրեաց պատուել  
զայս, ո ընտրեացէ պատիւ անձին:  
Պատուելով և խրախութեամբ խո-  
նարհ երկիր պատանելը նոցա, խըն-  
դրելով ինսդիր գառնալ նոցին, լուա-  
նալ զոսա՝ և կերակրիլ: Ուսանել  
կամիմ, եղեաքք. եթէ աղքատք էին՝  
զիսրդ զմին ի նոցանէ Տէր անուա-  
նեաց, և ի վերայ երեսացն երկիր պա-  
տառէր: Եւ եթէ գիտէր զի զուար-  
թունք էն, երկիր պատանել նոցա  
պատշաճ էր, իսկ կոչել Տէր ամենայ-  
նի՛ զիսրդ ժպրհէր զզուարթունսն: Եւ եթէ արգարեւ Աստուած էր մինն  
ի նոցանէ, կամ ի միում ումէք՝  
զիսրդ գարձեալ համարհակէր զԱս-

առւած ի հաց կոչել: Բազում ան-  
գամ ի բազում աեղիս յայնեցաւ  
նմա մհանութիւնն, և ի հաց՝ և ոչ  
ի միում աեղող ժպրհէցաւ կոչել  
զնա: Նայեցարուք, եղբարք, թէ  
նմանն իցէ այս ինչ զոր առեմս: Զի  
Էկին զսւարթունք առ Արբահամ,  
և Աստուած ի միում ի նոսա յոյժ  
յայնինի է: Զի մինչ ընթանայր՝ ընդ  
առաջ արանց ընթանայր. և իբրու-  
եհաս առ նոսա և խմացաւ՝ իբրեւ  
զուարթնոց երկիր պատանէր: Որ էր  
ուրախութեան մեծի, և վասն այ-  
նորիկ նախ քննեցին զնա: Եւ իբրեւ  
բերկրեցաւ նա ընդ աղքատաց, ու-  
րախ արար զնա Տէրն վերնոց: Կո-  
չեաց զսացյդն ի հաց մարդկան, զի  
եաես զնա ի մարմին մարդց, եթէ  
նմանութիւն էր և եթէ հաւասարի:  
Նա այսու յօդուածով ետես զնոսա:  
Ոչ կոչեաց զնոսա ի հաց, և ոչ  
լուանայր զոսա նոցա՝ եթէ ոչ գի-  
տէր եթէ սմին իրի իջևալ էին նորա  
ի յերկիր: Վասն աղքատսիրութեան

Էմուս Տէրն աղքատաց . ոչ կարօւակը ըստ սովորութեանն , այլ զուարթնովք անառաջառութեան : Եջ և զփոխարէնն հատոց սիրովին աղքատաց : Ոչ զժառանգութիւնն զոր ունէր նա , այլ ևս նա նմաժառանգութիւն՝ զոր ոչն ունէր : Տուովք , առէք , նմանեցէք Արբահամու գլխոյ առաջացաց , զի ուրախ լեջէք ընդ Արբահամու՝ ի սեղանն Տեանն Արբահամու : Առկաւ միւս եւս և ելանեմք մերկ յամենայն ընչեց մերոց . յղարկեսցուք ընդ մեզ գոնէ սակաւ ի բազում ընչէ զոր ժողովեցաք : Քանզի մաս ամենայն ինչ զոր ստացաք յիշաւի և յամենայնի զոր ստացաք՝ մեղքն միայն յղարկին ընդ մեզ : Կամեաց զի սուրբ ողորմութեանց քոց , յղարկեսցին ընդ քո , քանզի տրովք չնչէ մարդ զպարտաց զոր գրեցին քուքք :

Ծնթերցիր և ուսիր զոր ստաց Տէր մըր , թէ Արբահէք ի մամնայնէ

անիրաւութեան բարեկամս , ի յարկս իւրեանց ընկալցին զձեզի յաւիտենից : Մէծ է հարկս որ եղեւ մարդկան , զի և ի ժամու մահու իւրոյ՝ ի նմանէ ամենայն իւիք կարէ ստանալ զամենայն :

Օրհնութիւն այնմ որ ի ձեռն տրոց որ երթան զինի մահկանացուաց , քաւէ զպարտան որ չոգանն ընդ նոսա և նախ քան զնոսա : Քաւեան , Տէր , զմեղաւորս և զմոլորեալս , և զնաւչահանուան : Եւ զսոսա որք հանգուցին զծառայս քո՛ հանգուուցես յարքայութեան քում :

### ԿՅՈՒՐԴ ԽԶ.

ՕԲՀԱՌԻ ԹԻՒՆ ԱՅՆՄ ՈՐ ԿԵՐԱԿՐԵ ԶԱՄԵՆԱՅԱՆ ՏԻՆՉԵՐԸ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄՄՅ ԻՒՐՈՎ ,

Եղբարք , ահա հրաւիրեցաք ի հարանիսա որ խօսեցաւ քուերս , ոչ մահկանացու վիսայի՛ այլ Որդւոյն կենարարի ամենայնի : Փամանակեան

առագաստիւս կենաց՝ զառագաստն  
ճշմարտութեան։ Եւ մից աւուրս  
հարսանեօք՝ զհարսանիսն յաւիաեւ  
նից։ Խուրջք են երեսք իւր, դիակլովն  
թէ զոր ընտրեաց կամ յումինէ հրաւ  
ժարեաց։ Ծնարեաց զԾէրն փոխաւ  
նակ ծառայի, և զԱստուած փոխաւ  
նակ մարդոյ։ Ետես եթէ նենդաւոր  
է մահկանացուս, և սիրեաց զայլ  
ամուսին։ Այսեաց զակըն ծառայից՝  
և սիրեաց զԾէրն զուարթնոցն։ Աչա  
միոք իւր ցնծացեալ են, և մարմին  
իւր սուրբ արտաքրուստ։ Թիէ հարսն  
սիրայ զարդու իւրով այնու՛ որ ոչն  
բոշինի, և ժամկենի պսակաւս զոր  
դնէ նմա փեսայն՝ սակաւ աւուրց,  
քանի՞ եւս մեծացի ուրախութիւն  
սորա՝ որ առ զմեծ քաւութիւնն։  
Երեսքն Սովուսի չեն լուսաւոր՝  
որպէս լուսաւոր են միաք սորա։  
Երամեռութիւն յաւիաենից խոստաւ  
ցեալ է նմա, և պսակ՝ որ կայ յու  
փաեան։ Եւ սեղան ընակաւոր, և  
առագաստ հանապազորդ։

Յիսուս, որ առնէ զայսոսիկ այնց՝  
որ արարին զմարմինս իւրեանց աաւ  
ճար սուրբ աէրութեան նորա, քանի  
փոքունք են խոստացեալքն՝ քան  
զայնոսիկ որ արարեալ են։ Զի մահ  
ճաշակեաց վասն մեր, քանի՞ եւս  
տացէ մեզ զարբայութիւնն իւր։ Մի  
թշնամաննեցուք զթագաւորն, զի  
մի գարշեսցի արբայորդին՝ ի ձեռն  
բանից և վարուց։ Արբեսցուք, կացւ  
ցուք առաջինորա։ Նայեաց գու ընդ  
այժմու իսուեալս, զի զգուշացեալ  
է յամենայն իմեքէ, զի յամենայն  
իմեք հաճոյ լիցի անմահին՝ որում  
իսուեցաւն։

Գոհասցուք զամենայնի Տեառնն  
Որդւոյ. զի ինքն իբրու զհուր ուստիչ  
է, խոնարհեցաւ շնորհաւ իւրով զի  
խոսեցին նմա աղախնայք իւր։

Արդ սրբեսցուք զանձինս մեր,  
յասակեսցուք զի եզուս մեր։ Բերան  
մեր անարգեացէ զայսպանութիւնն, և  
սիրոք մեր՝ զիսորհուրդս չարս։ Առէք  
հանդիրձեցէք զլապտերս ձեր, և

արկեք և յամանս ձեր. զի իբրեւ  
կարգացի ասյն յարտութեան, լու-  
ցեալք՝ ընդ առաջ լինիցիք լուսովք  
ձերովք: Կազմեցէք զպաշարս ձեր,  
և հանդերձեցէք զհանդերձ ձեր, զի  
պաշարօք և հանդերձիւք մուծանէ  
զձեզ յառաջասա իւր: Մարմինք որ  
լուսցան և որբեցան, կացցեն նցին-  
պէս առանց արասայ: Մուրհակն  
այն զոր չնչեցին ջուրք՝ մի ևս եր-  
կրորդեցին և գրեցին: Ազօթք՝  
թեւք եղեցին մեզ, և պահք՝ իբրեւ  
զարդանելի: Զընկերոն փրկեցուք  
որպէս զանձինս, և զորդիս՝ առա-  
ւել քան զանձինս մեր: Փոքր մի,  
և մայամենայն զարդ զարդարանաց՝  
լկուաց, և որկորսառութիւնք՝ յոր-  
կորեից, և ցանկութիւնք՝ ի բողա-  
նցաց: Մէծ է քան զամենայն ինչ  
զոր խոստացաւ Տէրն ամենայնի,  
առաջ յետ ամենայն իրիք այնց որք  
անարդեցին զամենայն ինչ:

Օրհնութիւն յարժանի աացուք  
նմա ի մէջ այսր օրհնեալ հարսա-

նեաց, և ազօթս արասացուք՝ զի ար-  
ժանի լիցուք հարսանեացն յաւ-  
տենից:

### Կ Յ Ո Ւ Ր Դ Ի Ե.

ՕՐՀՆԵԱԼ ԱԿԴՐԱՑԵԱԿՆ ՈՐ ԵՏ ՄԵԶ ԶՄԱՐ-  
ՄԵՆ ԻՒՐ Ի ԳԱՅՈՒԹԻՒՆ ՄԵԼԱՅՆ ՄԵՐՈՅ

Ասաց Տէր մեր յԱւետարանին.  
Եթէ որ ոչ ուտէ զՄարմին և ըմպէ<sup>1</sup>  
զԱրիւն որդւոյ մարդոյ, ոչ ունի  
զկեանս խոստացեալս: Պնդեցուք,  
հզբարք, զի արժանի լիցուք առ-  
նուլ զդեզն կենաց նորա. զի ամե-  
նայն որ ոչ առնու յարժանի այնմ  
հաւասար է որ ոչ առնու: Փանզի  
այն որ ոչն առնու, քանզի ոչ հա-  
ւասաց՝ ոչ մերձեցաւ. և որ ոչ առ-  
նու սրբութեամբ՝ անարդանս կամի  
տոնել նմա: Ապցուք զՄարմին նո-  
րա, զի մի նմանեցուք ժողովր-  
դեանն որ ոչ հաւասացին: Բայց  
սրբագիս մատիցուք, զի մի գուցէ

Նմանիցեմք արհամարհողաց: Զի որ  
առնու զնա իբրու չէ արժանի՝ գու-  
տասանն առնու անձին իւրում: Եւ  
այս Են զարմանք, զի շահեցաւ մահ  
կենօք՝ յեսա լնդգէմ: Յորժամ այր  
առն մեղիցէ, յԱստուծոյ քաւինա.  
իսկ որ առ Աստուծն մեղանչէ,  
ով է այն որ քաւէն զնա: Հրեշ-  
տակք ոչ հասանեն ի զօրութիւնն  
մեծ որ ի ձեռս մեր, և ոչ առաւ-  
քըովէից՝ զոր առնուն ըրթունք  
մեր: Հրեղէնք զրկեալ Են ի նմանէ,  
և ահա շնորհեցաւ ստեղծեցոց:  
Ասողք խափանեցան ի նմանէ զի  
պատեցէ սովու զվիրաւորս: Եւ  
զուարթոնք որ ոչ աղակացան  
ցանկացան եղինն պարարտի: Զի  
վերինք փափակեցիննմա, քանի ծան-  
րացի հողեղինացս որք ի խրախու-  
թիւն խնդրեմք զնա: Զի չեն կարօտ  
քաւութեան՝ արգել զնա յարժան  
ի զուարթնոյ, և ետ մարդկան՝ ի  
վեր քան զարժանն: Դեղ կենաց  
թռեաւ ի բարձանց՝ զի բնակեցէ

յարժանիս իւր: Արբեսցուք զան-  
ձինս և զխորհուրդս մեր ի պատիւ  
փառաց նորա: ԶԱստուծած ունիմք  
ի ձեռս մեր, մի եղիցի արատ ի մար-  
մինս մեր: Մահալ բնակելով բնակէ  
ի մեզ, պրեսցուք զոդիս մեր ի ներ-  
քոյ. զի թէ ի գրօշակէ հանդերձի  
նորա ել մեծ առողջութիւն, քանի՞  
եւս ելցէ ի Մարմնոյ նորա քաւու-  
թիւն աղակելոց:

Մի Են ի ժամու յայսմիկ քահա-  
նայն՝ և որ առնու զնա: Մեծ է քան  
զմեզ մինչ բեկանէ զնա, իբրեւ առ-  
նումք զնա՝ հաւասարի ընդ մեզ:  
Զգոյշ լիցի որ մասուցանէն զնա,  
զուցէ փոքրկացի քան զառողն:  
Փութացի և առողն առաւել լինել  
քան զմասուցիչն: Նոքա բեկանէն  
զՄարմինն ի ձեռն աշտիճանացն.  
հասանէն մարդիկ ի Մարմինն՝ ոչ  
աշտիճանօք՝ այլ վարուք: Սակաւ է  
բերան գոհանաւոյ և լեզու օրհնե-  
լոյ. զի այն՝ որ երկինք փոքր Են  
նմա, փոքրկացաւ լինել ըստ ձեռս

մեր: Ասառն Ալինեա յորում էջ՝ դուզումն մեծ հնչեաց ի նմա: Ոյժ՝ յորմէ պատեցաւ լիսառնն ահա առաջալ ունին մատունկը մեր: Երկիր և ծով և երկինք, իբրեւ յափ փակեալ են ինա, և այն՝ որում փոքր են բնութիւնք՝ բերան ակար բաւաց նմա: Պարգեւ է այս զարմանալի, զի բնակեսցէ ի մեզ Տէր հանապազ: Ահա եթող զերկինս և էջ, սրբեցուք նմա զաւագաստ սրբալից: Հաւատով թէ մերձեսցուք, իբրեւ քաւութիւն տայ մեզ: Սըրբելով սրբէ զմեզ, և օգնութիւն մեծ տայ նա մեզ: Գոհասցուք, Լզրարք, զի արժանի եղաք կենդանի Մարմայ Փրկչն մերաց: Եւ զի անարդեցաւ ի ժողովրդենէն յայտնապէս, պատուեցն հեթանոսք ծածկապէս:

### ԿՅՈՒՐԴԻ ԽԸ.

ՕՐՃՆԵԱԾ, ՈՐ ԵՏ ԶՄԱՐՄՐԻՆ ԵԽՐ Ի ՍՊԱՆՈՒՄՆ, ԶԻ ՈՒՐԱԽ ԼիՑԻՆ ՆՈՎԱԿ ՀԵԹԱՆՈՍՔ

Սրբապէս կերիցուք զ Մարմինն՝ զոր բեւեռեաց ժողովուրդն բեւեռոք: Արբցուք իբրեւ զգեղ կենաց զ Արիւնն որ բցիէ ի կողէ նորա: Մարմինն զոր եհատ ի վերնասանն՝ ահա բաշխի ի միջի մերում: Եւ բաժակն զոր ետ առաքելոց իւրոց՝ ահա առին զնա շրթունք մեր: Բատ այսմ օրինակի տայ մեզ քահանայն զոր հատանէ և բաշխէ: Արախւ սըրբով, որպէս մատեան աշակերտքն՝ մատիցէ ամենայն մարդ: Վրան ժամու գործեաց Մովսէս ի մեջ անապատին Աստուածութեանն. զի ի սիրաս նոցա չէր բնակեալ՝ ի սըրբութիւն սրբոցն բնակեսցէ: Հեթանոսաց շինեցաւ եկեղեցի, ժողովեազ

աղօթից. յանձինու մեր բնակէ՝ զօւրութիւնն, կառավարն ամենայնի: Հոգւոյն Արբոյ մկրտութեամբն ի քաւութիւն մեղաց հաղորդիմք. և զօրութիւն նորա՝ որ ի մէջ Հացին բնակեալ է, մտանէ հանգչի ի մեզ, և պատրաստէ կազմէ հանապազ: Քահանային սրբոյ զօր կոչէ՝ աշն գրգիչ իջանէ: իբրեւ ոչ փոխէ նա ի տեղողչէ, տհա առ Հօր է՝ և ի Հացին, և ընդ աջմէն՝ և ի բաժակիս: ի վեր և ի խոնարհ, և ի սրաի մերում: և ո՛ կարէ կալ ի վերսց նորա: Ոչ եթէ շոգի կամ թերացումն ի նմանէ մտանէ բնակէ ի մեզ, այլ ի միում ի մէնջ բնակէ ամենայն՝ և ամենեւ քեան ոչ բաւեմք նմա: Արդ զի փոքրկացոյց զանձն իւր ըստ անձանց առողաց իւրոց, բնակեսցէ երկիւլ՝ յորս բնակէ Որդի Արբոյն: Նոյն ինքն էր ի վերնատունն որ տայրն, և բաշխեալ լինէր ամենեցունց: Թէ սղէտ և ժողովուրդն սպան զնա, ինքն զինքն սպան ձեռօք իւրովք:

Զսսպանեալ զոր սպանին ձեռօք իւր՝ խաչեցին անմիտքն ի Գողգոթայ: Թէ չէր սպանեալ զանձն իւր խորհրդագիւն՝ ոչ սպանանեին զնա Ճշմարտիւ: Նախ քան զօրն սպան զինքն յօրինակ, և ապա յետ աւուրին՝ ըստ պանին զնա: Զի մատնեաց զմարդին իւր ժողովորդեանն՝ այսպանել զնա որպէս և կամեցան, ահա ետ զՄարմին իւր հեթանոսաց՝ պատուել զնա որպէս և սիրեցին: Միուաւ նովաւ ժողովուրդն որ սպան զնա, կեցին նովաւ հեթանոսք առողք իւր: Զի զշրէաստան կործանեաց սպանմարդ իւրով, շինեաց զԵկեղեցի Արեամբն իւրով: Ժողովուրդն առաջին որ յարձակեցան ի նա՝ ցրուեցան ընդ չորս կողմանս: և հեթանոսք ցրուեալք որ ցնծացան ի նա՝ ժողովեցան ի մի ժողով:

Օրհնեալ որ արժանի արար զԵկեղեցի՝ զի քաւեսցին Մարմնով և Արեամբ նորա:

ԿՅՈՒ ԽՐԴ ԽԹ.

ՕՐՀԵՆԱԱ, ՈՐ ԵՏ ԶՄՈՒՐՄԻՆ ԻՐ Ի ՔԱՆ  
ԽՈԽԹԻՒՆ ԱՄԵՆԱԱՅՆ ՀԱԽԱՍԱՅԵԼՈՅ

Կարեօք մատիցուք, եղբարիք, առ  
Մարմինս այս զոր ասայ քահանայս,  
և դողումն ընակեսցէ իշըթունս մեր՝  
յառնուլ զգեզս կենաց: Ի ժամու  
յորում հասանի Մարմինն սուրբ,  
զլենումն նորա յիշեսցուք\*...)

ԿՅՈՒ ԽՐԴ Ծ.

... օրէն է մերձենալ. զի թէ ըզ-  
թերութիւնս թողու նմա և առանց  
աղայ առնէ զնա: Խակ որ միշտ է  
զգածնալ ի մեզս՝ արժան է նմա զի-  
տել զանձն իւր: Զի գուցէ իբրեւ  
ոչ սրբի թշնամանս առնէ Մար-

\* Աստի եւս երեք թուղթք բանից ան-  
կհալ:

մնյն, այնպիսին երկոքումք մե-  
զանչէ: Զի ոչ զանձն իւր գիտէ նա  
թէ յորում ալտեղութեան է, և ոչ  
զՄարմին Տեառն իւրց՝ թէ քանի  
մեծ է: Առաքեալ գրէ վասն այն-  
պիսւյն, թէ ի պարտաւորութիւն  
իւր առնու զնա: Զի ոչ յորժամ  
սուրբ է առնու զնա, և ոչ կարեօք  
մերձենայ ի նա յամենայն ժամու:  
Որով մտօք մերձենայ մեղաւորն որ  
միշտ մերձենայ՝ եթէ ոչ արհամար-  
չութեամբ: Երանի որ եղեւ ար-  
ժանի մկրտութեամբ քաւութեան,  
և մերձեցաւ ի Մարմին և յԱրիւն  
նորա, իբրու չիցէ ըստ գիւտի մտաց  
իւրոց: Յես սորա, այնմ երանի՝ որ  
մերձենայցէ երկիւղիւ, և հաւատայցէ  
թէ քաւութիւն լինի նմա որպէս և  
գրեալ է: Լուարուք, եղբարք, Որդ-  
ւոյ՝ զի ասէ, թէ Որ ուտէ զՄարմին  
իմ՝ նա յիս և ես ի նա. և Յարու-  
ցից զնա յաւուրն յեանում: Խակ  
եթէ և ի գերեզմանն մեր լնդ մեզ  
է, որպէս և ասաց, յայսմ աշխարհէ

և արքայութեան ո՞րչափ եւս առաւ-  
ւել առ մեզ : Զայս բան լուան աշա-  
կերպին և ոչ համբերէին : Երկման-  
ցին թէ զիարդ մարթի այսմ լինէլ,  
որում չէ մարթ : Խորհեցան թէ  
զիարդ տայ մեզ մինչ կենդանի է ,  
և յետ մահու խըրոյ : Եւ ո՛ կարէ  
ուտել զմիս մարդոյ մինչ կենդանի է  
և կամ մեռեալ թշնամանեալ նորա՝  
այսմ թերեւս մարթ է լինէլ . իսկ  
ուտել կենդանւոյն զՄարմին նորա՝  
կամ իրու մեռեալ իցէ , չէ մարթ :  
Ոչ լուան միամաբար , և ոչ հո-  
գեպէս դատեցան զայն . տեսին թէ  
խիստ է քան զնոսա՝ թողին զնա և  
գնացին :

Ոչ կամեցաւ յայտնել Փրկիչն ըզ-  
խորհուրդ Մարմնոյննախ քան զժա-  
մանակն : Եթէ ուտեն զնա՝ ասեր ,  
իսկ եթէ զիարդ՝ ոչ դուշակեաց :  
Մէծ էր սէր առաքելոցն , որք սիրով  
իւրեանց զՄարմինն մինչ կենդանի  
էր և մեռեալ ուտել պատրաստե-  
ցան : Մինչեւ հարեալ էր զհացն՝

ուտելին զնա ծածկապէս , իսկ յոր-  
ժամ բաշխեաց՝ յայտնապէս մեր-  
ձեսցին ուրախութեամբ :

Արդ ուաէ զՄարմին Որդւոյ , ըզ-  
Հաց կենդանի ուաէ : Եւ որ ըմզէ  
զԱրիւնն՝ ճաշակեն շրթունք իւր  
զգելս կենաց : Իսկ մեք որպէս մարդք  
որ զՄարմին Բարձրելոյ ուտեմք ,  
սրբեցուք նմա : Զիս որպէս հանդու-  
ցեալն ընդ աջմէ՝ հանդիցուք , և  
խորհուրդքս մեր , զի յոյժ սիրեաց  
զմարդկութիւն նորա : Ահա ամե-  
նայն իւլիք գարբանէ զմեզ Մարմնովն  
իւրով , սրբէ զազտ մեր Արեամբն  
իւրով՝ որով հազորդիմք ընդ նմա :  
Արդ եթէ որ ոչ ուաէ զՄարմին  
նորա և ըմսէ յԱրենէ նորա՝ չիք  
նմա կեանք որպէս ասացաւ , վայէ  
այնց որք ոչ առնուն , քանզի ոչ  
կամեցան հաւատալ ի նա : Լաւ է  
մեղաւորին որ մատուցանէ ի բիբու  
իւր սիրով և պինդ հաւատով՝ զի  
քաւեցի նովաւ , քան այնմիկ որ  
արդարն է և առնու զնա ի յուլա-

Նաւեաց։ Զեք ստոյդ որ արհամարշանօք մերձնայ ի Ալրմին Տևառն մերոյ։ զի եթէ այսպէս է, չէ նա ստոյդ՝ այլ սուտ է ամենեւին ի ներքոյ։ Զեք որ անարդէ զԱրբութիւնն և ինքն լինիցի ի սրբութիւնն։ Որ առնու զԱլրմինն արհամարհանօք՝ առնէ զինքն դարչելի վաղվագակի։

Տացես, Տէք, մոլորելոց՝ զի մերձնացին առ նա հաւասարվք, և արժանի արացես զարասաւորս՝ զի մերձեցին ի սա գոլութեամբ։

### Կ Յ Ո Ւ Ր Դ Մ Ա.

ՕՐՀԵՆՍՈՒ. ՈՐ ԳՐՇԱՄԵԱՑ ԱՐԵԱՄՐԵ ԻՒՐԱՎ,  
ՈՐՔ ԶՀԱԽԱՏՍՍ ՆՈՐԱ ՍՏԱՑՈՅ

Զի ցանեցին հեթանոսք զարիւն անասնոց առաջի որթուց, հեղ զԱւրիւն իւր Որդին օծեալ յարբումն ամենայն մարդկան։ Եւ զի զոհեցին միս դրօշելոց՝ բարկացուցանել զԱստուած, եղեւ մեղ Որդին պատարագ

հաշտութեան, հաշտեցուցանել ընդ մեղ զՀայր իւր Զի կերակրէին զաստուածն՝ եղեւ մեղ Աստուած ի կերակուր։ Եւ զի զենուին զուարակս կոռյն, եղեւ մեղ Որդի պատարագ՝ միով կատարեալ Պատարագան։ Խնայեաց զոչնարսն ի սպանմանէ, և զորթան ի խորհակերմանէ, և զթըռչ չունան ի յօշուածոյ։ Զի նկարեաց զմեղ Տէք յորովայնի, կերակրէ ըզմեղ արտաքոյ արդանդի յայտնեաք և ծածկեցելովք։ Հոգաբարձէ հոգւոց և մարմնոց կեցուցանէ զմարմին հացիւ, և զոդին կենդանի Հացիւն։ Արբուցանէ գինովք զմարմինս մեր, և զհոգիս՝ Բաժմական փրկութեան։ Զի արարին հեթանոսք զդրոշեալս՝ հարկ եղեւ կերակրէլ զնոսա։ Եւ զի չերան որ ուտէր, եղեւ նոցահուր՝ բերան։ Հուր որ ուտէր զզոհս նոցա, և զրկեալ են աստուածք նոցա։ Եւ գինին որ նոցանուիրին ըմպէ զայն երկիր ծարաւի։ Եթէ Մովսէս, որ ետես եւեթ զԱստուած՝ այնպէս

Քառաւորեցաւ, քանի եւս փառաւորեսցին միտք՝ յորս բնակէ Որդի Սրբոյն։ Զի օձն մեռեալ բժշկեաց զծակուտուածս օձիցն այնց, քանի եւս բժշկեսցէ Մարմին կենդանի ըղիարուածս մարմնոց ընկերաց իւրոց։ Եթէ այն՝ որ անհանձարն էր, բաշխեաց ձրի առողջութիւնս, Տէրն ամենայն գիտութեան՝ քանի եւս տացէ զկեանս իւր ձրի։ Եթէ օրինակ անիծեալ օձին կեանս ետ մարմնոց, Մարմին և Արիւն Օրհնելոյն՝ քանի եւս տացէ հոգւոց։ Նմա փառք վասն ամենայնի։



## Յ Ա Ն Կ

Ա. Հ. Գ.	5
Յ Ա Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ք	13
Վ Ա Մ Ն ք ն ո յ և ա ր թ ն ո ւ թ ե ա ն	15
Վ Ա Մ Ն զ ս կ ո ղ ա ց	19
Կ Յ Ո Ւ Ր Ի Փ Ձ	23
Կ Յ Ո Ւ Ր Ի Փ Ձ. — Օ Ր Հ Ն Ե Ա Լ է ո ր ի զ ի ն դ ն կ ա ն ա կ է ն յ ա զ ե ց ո յ ց հ ա զ ա ր ս բ ա զ ու մ ս .	27
Կ Յ Ո Ւ Ր Ի Փ Ձ. — Օ Ր Հ Ն Ե Ա Լ Տ է ո ր ի ա ն դ ր ա ն ի լ ի ն, ո ր կ ե ր ա կ ր է զ ա մ ե - ն ա յ ն ա կ ն ա ր կ ե լ ո վ կ ա մ ա ց ի ւ ր ո ց .	31
Կ Յ Ո Ւ Ր Ի Փ Ձ. — Օ Ր Հ Ն Ե Ա Լ Մ ի ա - ծ ի ն ն, ո ր ի պ ա ր զ ե ւ է ն ո ր ա կ ե - ր ա կ ր ի ն ա մ ե ն ա յ ն ա ր ա լ ա ծ ք .	34
Կ Յ Ո Ւ Ր Ի Ի . — Օ Ր Հ Ն Ե Ա Լ ո ր ե տ մ ե զ կ ե ր ա կ ո ւ ր ի զ ա ր մ ա ն ի կ ա ր օ ս ո ւ - թ ե ա ն մ ե ր ո յ .	38
Կ Յ Ո Ւ Ր Ի Ի Ա . — Օ Ր Հ Ն Ե Ա Լ ո ր ա ճ ե - ց ո յ ց զ ծ ո ց ս ա մ ո ւ լ ի մ է լ տ ա ն կ ն ո չ ն ա յ ր ո ւ յ, զ ի ս ր ու ա կ ը և ս ա -	


	ԵՀ
կորք ամուլը՝ ծնան յանկարծ յական թօթափել . . . . .	43
ԿՅՈՒՐԻ ի՛մ. — Օրհնեալ է Տէրն ամենայնի, որ է հոգաւարձու առ մենայնի. . . . .	46
ԿՅՈՒՐԻ իՊ. — Քեզ օրհնութիւն, Տէր մեր, զի ի շնորհաց բոց կե- րակրին ամենայն հաւատացեալը.	50
ԿՅՈՒՐԻ իՊ. — Օրհնեալ որ եա- մեզ կերակոր, և խոսացաւ ըզ- դրախոտն աղենական. . . . .	53
ԿՅՈՒՐԻ իԵ. — Օրհնեալ որ կե- րակրէ ի մեծութենէ իւրմէ զա- մենայն քաղցեալս երկրի . . .	56
ԿՅՈՒՐԻ իԶ. — Օրհնութիւն Որդ- ւոյ օծելոյ, որ կերակրէ զամե- նայն յիւրմէ . . . . .	60
ԿՅՈՒՐԻ իԵ. — Օրհնութիւն, կե- րակրիչ ամենայնի՝ ի քաղցելոց որը լցան և նշխարեցին. . . .	63
ԿՅՈՒՐԻ իԹ. — Օրհնեալ է այն որ չէն իւիք կարօտ, որ լնուն զամենայն կարօտութիւնս մեր .	64
ԿՅՈՒՐԻ Լ. . . . .	67
ԿՅՈՒՐԻ ԼԱ. — Օրհնութիւն Տեսան բարերարի, որ կերակրաց զա- րարած իւր. . . . .	71

	ԵՀ
ԿՅՈՒՐԻ ԼԲ. — Օրհնեալ որ ի ձեռն սիրելոյ իւրոյ՝ կերակրէ զաշխարհ լրիւ իւրով. . . . .	75
ԿՅՈՒՐԻ ԼԳ. — Ի քաղցելոց որ լցան և նշխարեցին, ըեզ օրհնու- թիւն, Տէր կերակրիչ. . . . .	78
ԿՅՈՒՐԻ ԼԴ. — Քեզ օրհնութիւն ի տիեզերաց, կերակրիչ աշխարհի զթութեամբ բով . . . . .	82
ԿՅՈՒՐԻ ԼԵ. — Ի քաղցելոց յա- զեցելոց ըեզ օրհնութիւն, Տէր կերակրիչ . . . . .	84
ԿՅՈՒՐԻ ԼԶ. — Օրհնեալ Տէր, որ կերակրէ զամենայն մարդիկ .	88
ԿՅՈՒՐԻ ԼԵ. — Օրհնեալ է Տէր որ կերակրէ շնորհիւ իւրով զա- ւատացեալս. . . . .	91
ԿՅՈՒՐԻ ԼԲ. — Օրհնեալ որ կե- րակրէ զամենայն շունչ իւրը զա- զարս յանապատին . . . . .	94
ԿՅՈՒՐԻ ԼԹ. — Օրհնեալ որ կե- րակրէ ողորմութեամբ իւրով զաշ- խարհս, զոր հաստատեաց զթու- թեամբ . . . . .	98
ԿՅՈՒՐԻ Խ. — Օրհնեալ որ եկեր ընդ աշակերտան, զի ցուցչէ թէ մարմին զգեցաւ . . . . .	103

ԿՅՈՒՐԻ ԽԲ. — Ի քաղցելոյ և ի լիութենէ մերմէ, բեզ օրհնութիւն	
Տէր բարերար . . . . .	107
ԿՅՈՒՐԻ ԽԳ. — Քեզ օրհնութիւն յամենայն կողմանց զոր կերա-	
կրես հանապազ շնորհօց ըովք . .	112
ԼԵՅՈՒՐԻ ԽԳ. . . . .	116
ԿՅՈՒՐԻ ԽԵ. — Օրհնեալ Արդի Տեառն ամենայնի, զի նա է որ	
կերակրէ զամենայն . . . . .	118
ԿՅՈՒՐԻ ԽԶ. — Օրհնութիւն այնմ որ կերակրէ զամենայն տիեզերս	
ողորմութեամբ իւրով . . . . .	121
ԿՅՈՒՐԻ ԽԵ. — Օրհնեալ անդրա-	
նիկն որ ետ մեզ զմարմին իւր ի	
քաւութիւն մեղացն մերոց . .	125
ԿՅՈՒՐԻ ԽԸ. — Օրհնեալ որ ետ	
զմարմին իւր ի սպանումն, զի ուշ	
րախ լիցին նովաւ հեթանոսը . .	129
ԿՅՈՒՐԻ ԽԹ. — Օրհնեալ որ ետ	
զմարմին իւր ի քաւութիւն ամե-	
նայն հաւատացելոց . . . . .	132
ԿՅՈՒՐԻ Ծ. . . . .	132
ԿՅՈՒՐԻ ԾԱ. — Օրհնեալ որ դրոշ-	
մեաց արհամբ իւրով՝ որք դհա-	
ւաս նորա ստացան . . . . .	136

ՀԵՂԱ

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



(454.) 300

ԳԱԱ ՔիմՆարար Գիտ. Գրադ.



901000918